Universitäts- und Landesbibliothek Bonn

Hnoc' ew Noroc' Patmut'iin Vasn Daiti ew Movsêsi Xorenac'ioy

Srvanjtyanc', Garegin

K. Polis, 1874

urn:nbn:de:hbz:5:1-60392

Visual Library

Goussen 3571

ն 35է1

Հ՟ՆՈՑ ԵՒ ՟ՆՈՐՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՎԱՍՆ ԴԱՒԹԻ ԵՒ ՄՈՎՍԷՍԻ
ԽՈՐԵՆԱՑՒՈՑ.

ԹՈՒՂԹ ԴԻՈՆԷՍԻՈՍԻ
ՕՐԻՆԱԿՔ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ
ԴԱՄԲԱՐԱՆ Ս. ՍՈՒՔԻԱՍԱՆՑ
ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՔ

ՔԷՇԷ ՊՕԼԷ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ
ԳԱՐԵԳԻՆ Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
ԷՍԱՏ ԷՖԷՆՏԻ ԽԱՆ ԹԻՒ 11

1874

ԵԱԶԸՃԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Սուլթան Համամ 11
YAZIDJIAN
LIBRAIRE - EDITEUR
Sultan Hamam 11 - Constantinople

3571

ԱՌ ՎԵՐԾԱՆՕՂՍ

վանորայք և եկեղեցիք Հայաստան աշխարհին մերոյ են մէն մի գանձարանք պահարանք ազգային հնութեանց, բեր ասել եւս և ազգային գոյութեանց։ Այսոքիկ են վայրք, յորս մնացեալ ամրացեալ ապաստան եղեն ոգիք սրբասէրք և ուքնասէրք · անդանօր վաստակէին միտք և մատունք յօրինողաց և օրինակողաց գրենեաց թարգմանաբար և հեղինակաբար · ծաղկարարք, կազմարարք, երգասացք, չարականք, ճառողք, վարդապետողք, առաջնորդողք, մեկնիչք, պատմիչք, տումարադէտք · սուքա և սոյնպիսիք առ հասարակ վանականք են և եկեղեցականք 'ի հինս:

Եթէ լինէր ոք ըղձացող և սիրող այսց երկոց, թողոյր լքանէր զվիճակ իւր, մերկանայր զոր ունէրն, թէև թագաւոր կամ սպարապետ, նախարար կամ ոստանիկ, ըզ ծիրանին, զմականն, զգաւառըն և զտոհմն · գնայր մտանէր 'ի գաւիթ տաճարին, և փոխէր յանուն և 'ի ձեւ տիրացու, կրօնաւոր, և սկիզբն առնէր ընթեռնլոյ և գրելոյ:

Հայեցեալ յանցեալ աւուրըս պատմական կենաց մերս Հայաստանեայց, ոչինչ ապաքէն մնայր յայնքան կործանմանէ, յասպատակութեանց, գերեվարութեանց, սովոյ, սրածութեանց պուրծ, որք յարտաքնոյն հասանէին և 'ի ներքնոյն ուրացելոց բռնանէին՝ ջնջել զայս ազգ յերկրէ, բառնալ զանուն Հայաստանեայց 'ի ներքոյ արեւոյ։ Տարաւ Պարսիկն զիւր աւար բազմաճոխ. եհեղ թաթարն զարիւնս գետօրէն. 'ի մոխիր նստեցոյց զՇահնշահս Հայոց, զարեգականման գահըն Անւոյ և զքաղաքս պայծառս համօրէն՝ Բիւզանդեանն ցոյն. մանրեաց փշրեաց զմնացորդ ոսկերոտին՝ Արաքն անագորոյն. և զճիւան ողկուզաց ճմլեաց մզեաց չահն Հըռովմայ։

Ցայսօր իսկ աչօք մերովք

տեսանեմք, զի բաւական չը համարեալ զանձինս տարագիրս ողորմելի Հայոց, և'ի բաժինս բաժինս հերձելոց, նկրտին, ջանան և 'ի լեզուէ հանել, յանուանէ հայութեան թափել, և օտարացուցանել խսպառ զհեռացեալսն արդէն 'ի հողոյ հայրենեաց, և 'ի մօրէն իւրեանց կաթանէ ստեանց։ Եւ ո՞յք ոմանք իցեն սոքա։ Սոքա են որ 'ի վերին երեսս պաշտպան, կարեկից, յուսատու ցուցանեն զանձինս, քրիստոնեայք, այլ կեղծաւորեալք, կամին կլանել զմեզ։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Իմա՛ զինչ ասեմ։

Առ նախնեօքն մերովք՝ վանորայք և տաճարք իբրև ամուրք անընկճելիք ախոյեան եղեն ընդդէմ հրոսակաց աւերածուաց · ոչ ոք կարէ ուրանալ, զի եղէգն և փետուր, բարբառ և քարոզ պաշտօնէիցն Աստուծոյ և սպասաւորաց բանին՝ մեծապէս զօրեցին բեկել, փշրել զզօրութիւն և զխորամանկութիւն թշնամւոյն · և յորժամ տեսին զի անկանէին մարտիրոսաբար բազմութիւնք որդւոց եկեղեցւոյ, և կամ պարտեալ վարեալ լինէին 'ի կապանս և 'ի տար աշխարհս, ելանէին, յառաջէին, առաջնորդէին այնոցիկ, անկանելով նախ քան զնոսա · և գերեալք վարեալք զառաջոյ՛նոցա, իբրեւ զամոլս 'ի լոյծ հարօրոյ:

Ոգելի և զմայլելի է արդարեւ պատմութիւնն որ յաղագս վանականացն և եկեղեցականաց մերոց այսպիսեաց:

Ընդէ՞ր ցրուեցան Հայկայ որդիք, ուր և ցրուեցան. շատք եւս ընկղմեալք կորուսեալք եղեն 'ի ծոցս արեւելից և հարաւոյ, յափունս արեւմտից և հիւսիսոյ. — առ 'ի փրկել զգլուխս իւրեանց: Զի՞նչ ինչ ուրեմն արդեօք կրեցին որք կեցինն և շարունակեցին հայաբար ըզ կեանս 'ի հայրենիս, որոց ամենեցուն զօր և զօրութիւն էր մի միայն սէր սուրբ տաճարաց և երկնանման վայրաց գմբէթարդ վանորէից, օծելոց խորանաց. ուր զանմահ պատարագն մատուցանէին. ուր այնքան աղօթկեր և մատենագիր արք և հարք մնային. ուր տան և տոհմին իւրեանց յիշատակագիրք 'ի խաչքարինս և 'ի կողս սուրբ աւետարանաց, յայսմաւուրաց, ճառընտրաց և այլոց սուրբ և պիտանի գրեանց թողուին: Ինձ թուի թէ այսոքիկ կերտուածք, տաշուածք և գրուածք մեծապէս աւիթ եղեն պահելոյ զմնացեալ Հայս 'ի Հայս, որպէս և ականջօք իմովք լուայ երբեմն 'ի բերանոյ ուրուք բնակելոյ յԱկղաղբիւր գիւղն

Մշոյ՝ Խըդօ անուն Հայոյ, որ ոչ զայբ գիտէր և ոչ զբեն երբէք ճանաչէր, այլ յաւուր միում այն ինչ Հայք ոմանք նեղեալք 'ի հարստահարչաց՝ խորհէին թառնալ զտունս և գնալ 'ի Պարս կամ 'ի Ռուսս, յայնժամ Խըդօն՝ որ մի էր 'ի տառապելոցն, բացեալ զբերանն և յեռանդէ հոգւոյն այնքան իմն ազդու յոդւոց հանեալ առէր ցայնոսիկ.

«Երթա՛նք, երթա՛նք, բա՛ իմա՞լ Թորկենք զմեր եղեկեցին, զմեր պապերու գերեզմըններ, զմեր վանքեր, սըրբ Ովաննէս, սըրբ Կարապետ, Առաքեալք (Առաքելոց վանքըն), էս զըմէն սըրբեր, խաչեր, խաչքարեր, էս զըմէն կարգաւորներ, մեր ժամ ու պատարագներ . . . կ՚եղնի՞ որ էսոնք թորկենք Քրդերուն ու երթանք . . . »։ Եւ այլն»։

Այս սէր ազգի մերոյ՝ տեսանի նաեւ յայնքան արձանագիրս, ՚ի կոնդակս, ՚ի քանդակս, և ՚ի յիշատակարանս ձեռագրաց մատենից, յորս նշանակին գիւղորայք, այգիք, անդաստանք, դըրամք, տունք, աւանք, և պէս պէս ստացուածք տըւեալք մշտնջենական նուէր այսմ վանուց, այնմ ուխտին կամ եկեղեցւոյ, և անիծիւք կնքեալ զբանն ՚ի գլուխս հանողացն և յափշտակողացն զայնոսիկ։

Տեսանեմ ես աւասիկ, զի հայրենիք Հայոց ամփոփեալ են 'ի վանորայս և յեկեղեցիս մեր, ըստ խորհրդական և ըստ նիւթական նշանակութեան միանգամայն. քանզի, եթէ գոն մեզ այսօր սեպհականութիւնք ինչ ազգային կամ հայրենական, այն միայն սրբավայրքն են մեր, զորս ազատ են թողեալ տիրողք և խնամող պետութիւնք 'ի վերայ մեր:

Եւ քանզի այս այսպէս է, շրջեալ զբանն՝ ասեմ. ուրեմն եկեղեցին է հայրենիք մեր. 'ի նմա գտանեմք զլեզուն և զբարբառ հարանց մերոց, 'ի քարտէզս և 'ի քարինս նորա դրոշմեալ անուանք, ժամանակք, անցք, յիշատակք անձանց բարեպաշտից և հայրենաշինից, անդ արքայք և բամբիշք, նախարարք և դշխոյք, տեարք և տիկնայք, հայրապետք և վարդապետք, քահանայք և կղերիկոսք, և ամենայն արք անուանիք:

Հոգեաց վանքն յԱնձեւացիս՝ ցուցանէ մեզ զդարան գերեզման առիւծուն Տրդատայ. եկեղեցին Աշտիշատայ 'ի Մուշ՝ զերանելի Պարթեւն Սահակ. խորանն Աշտարակայ յԱրարատ՝ զցանկալին Մաշտոց. վանքն Ս. Ղազարու կամ Առաքելոց 'ի Մուշ՝ զմեծն Խորենացին, զանյաղթն զԴաւիթ, զՅօհանն և զՂազար Թարգմանիչսն: Վանքն Վարագայ 'ի Վասպուրական՝ զԱրծրունին Սենեքերիմ և զԹագուհին Խոշոշ տիկին, և զՊետրոս հայրապետն գետադարձ ։ վանքն Ոստանայ 'ի Ռշտունիս՝ զպատուական պատմիչն Եղիշէ ։ վանքն Նարեկայ՝ զՆարեկացին ։ վանքն Ամարասու 'ի Սիւնիս՝ զԹոռն Ս․ Լուսաւորչին զՍ․ Գրիգորիս ։ վանքն Կոփայ՝ 'ի յԱպահունիս մօտ 'ի Մուշ՝ զերջանիկն Դանիէլ, որ 'ի Թոռանց Ս․ Լուսաւորչին համարի ։ վանքն Բասենու կամ Հասանգալէի՝ զՄագիստրոսն Գրիգոր 'ի հսկայակերտ դամբարանի ։ վանքն Խէկայ (Հայկայ) 'ի Հայոց ձոր՝ զխոստովանողն Աբրահամ զյիշատակեալն և զերանեալն յԵղիշէէն։ վանքն Ս. կարապետին Տարօնոյ՝ զՄուշեղն, զԳայլ Վահան, ընդ բազմաց ականաւորաց։ Եկեղեցին Իշխանագոմ գեղջն առ բերանս Հայոց ձորոյ՝ զՎարդ պատրիկն բարեպաշտ։ Եւ զի՞ մի մի թուիցեմ· թէպէտ ցանկալի, այլ ոչ կամիմ հարեւանցի անցանել, և ոչ կարող իցեմ զամենայն յիշատակել, որք են 'ի Կամախս, 'ի Թորդան, յԱյրարատ, շուրջ զԱնւով, և որ 'ի հիւսիսայինն խիտ և հոյակապ տաճարս, և 'ի Կիլիկիա՝ պերճակառոյց և բազմաթիւ վանորայս իցեն նշանք և գերեզմանք հարցն մերոց· ընդ գերեզմանն և բազում ձեռագիրք մագաղաթեայք, խաչքարեայ մահարձանք, դրանդիք փորագրեալք, արծաթաչէն խաչք, սուրբ մասունք սրբոց ոսկեպատեալ և արծաթակապ, յորս յիշատակ գրեալ կան նուիրատուաց անուանք. և նոյն իսկ սուրբ մասունքն են անգին և անգիւտ, որպէս է տեսանել զմի մասն սուրբ Վարդանայ Մամիկոնէի 'ի սուրբ Վարդան եկեղեցին Վանայ. մասն մի ևս 'ի սուրբ Յովհաննու վանսն Մշոյ, ուր է նաև շիշ նարդեանն աղնուի իւղոյ մեծագնի, զոր եհեղ Մարիամ 'ի վերայ աստուածային գլխոյն Յիսուսի Տեառն մերոյ. անդ է և մասն

Ս. Ղեւոնդայ. և այլն ։ Վանքն Ոստանայ՝ ուր շիրիմ սրբոյն Եղիշէինն է, ունի զայն խաչն պատուական և պաշտելին, զոր Ս. Սահակն Պարթեւ ետ թոռին իւրոյ Ս. Վարդանայ. և յորժամ Վարդանն սուրբ ինքնին շինեցաւ խաչ 'ի սէր խաչելոյն փրկչին 'ի դաշտին Արտազեան, հանեալ 'ի պարանոցէն զպապկենական անգին նուէրն զայն, առ ընկալաւ Եղիշէն պրկեալ 'ի կուրծս իւր խաչանուէր. այն և եթ էր որ մխիթարէր ըզ հոգին սգաւոր ընդ կորուստ այնքան մեծի և անզուգական առն առաքինւոյ, և աշխարհին հայրենւոյ. և անցեալ բարձրացեալ 'ի լերինս

Մոկաց՝ այնուհետեւ զՊօղոսին ունէր զհետ՝ Աշխարհ նմա 'ի խաչ ելեալ, և նա աշխարհի ։

Երանի՛ թէ լինէր ոք, կամ, կամէին վանական և եկեղեցական հարք մեր իւրաքանչիւր զպատմութիւն և զստորագրութիւն իւրաքանչիւր վանորէից և եկեղեցեաց գրել և հրատարակել, հանդերձ ամենայն նշանօք, յիշատակօք, շինուածովք, սահմանօք վայրաց, և սպասուք սուրբ սեղանոյն, և թուով սուրբ Մասանց, և այլն, մանրամասնօրէն ։ Ես 'ի մտի ունիմ, եթէ, Տէր յաջողեսցէ, զպատմութիւն Մշոյ Ս. կարապետի վանուցն իբր հարիւր ամաց՝ գրել և տալ 'ի տիպ· ընդ որ ունիմ կցորդել զնոյն վանուցն Սրբոյ Մաստունքն մի առ մի, և ըզսրբոյ Յօհաննու վանուցն՝ սուրբ մաստունս, զորոց ցանկն ունիմ առ իս բովանդակ ։

Յայսցանէ ամենայնէ, որք ինձ կարևորն թուին, և զուշ իմ գրաւեալ ունին, չկամիմ՝ մանաւանդ թէ չկարեմ լիովին բացատրել· զայսքան և եթ գրեմ առ 'ի յուշ ածել եկեղեցասիրաց և Հայրենասիրաց, զի ինքեանք ևս ուր և գտանիցին ձեռն արկանիցեն վաստակել յայսպիսի վաստակս պիտանիս և գիտելիս ամենայնի, որք իցեն արդարև Հայք ։ Ամենայն ոք կարէ խելամտել թէ զի՞նչ ի՞նչ և ո՞րքան անքան են յիշատակք այսպիսիք 'ի Մայր Աթոռն մեր սուրբ 'ի Վաղարշապատ, և յԱթոռն սուրբ Երուսաղէմի · նաեւ 'ի Սիս, յԱղթամար, և յայլ և այլ նշանաւոր եւս և յաննշան կարծեցեալ յեկեղեցիս և վանորայս, մինչեւ տեսանին իսկ բազումք և 'ի տունս տունս երիցանց և աշխարհականաց :

Քան զանթիքայ դրամս և քարինս առաւել անթիքայք են այսպիսեաց հաւաքումն և տարածումն :

Իցէ՛ զի ընկերանային բանասէրք ազգայինք կարողագոյնք, որոց գործ և նպատակ լինէր հաւաքել և տըպագրել տալ զանտիպ մնացեալ մատենագիրս. մեզանմանք միայնակ զի՞նչ մարթէն առնել. այն ինչ տպագրիչք թանգ և կանխիկս պահանջեն. և տպեցեալք անվաճառելի մնացեալ ցեցակեր լինին և մաշին:

Դարձուցեալ զբանս և մասնաւորեալ յաղագս մատենագրաց գրենեաց մերոց ազգային, զարմանայի երբեմն ես ինքնին, և զարմանամ ցայժմ վասն այնոցիկ, որք աւաղեն և հառաչեն 'ի խոռոց, յորժամ լսեն և ասեն թէ՝ Լէնգ—Թիմուրն ըզ մեր Հայոց գրեանս ժողովեալ և գերի վարեալ տարեալ թաղեալ ունի 'ի միջնաբերդին Սմբղանդու ։ Յիշատակ արդարեւ կարի մըրմռալի ։

Այլ սակայն աւաղել արժան է առաւել վասն այնոցիկ գրենեաց, որք 'ի հող Հայաստանին թաղեալ փըտեալ իցեն. և որք 'ի ձեռս հողագլուխ անձանց անցեալ, անխնամս պահելով, 'ի ներքոյ կաթիլքի տանեաց յանձրեւաց, կամ 'ի փոշիս և 'ի մոխիրս թողեալ շաղախեալ, փճացեալ իցեն ։

Ի յետին ժամանակս մանաւանդ, յորժամ 'ի վանորայս ընտիր համարէին զայն ոք, որ գիտէր քաջ եղնավարութիւնս, որ ոք քաջ լինէր փայտիւ հաւաքել զիւղ, զպանիր, զմատաղ, զհոգեբաժին և զպտուղ ՚ի թէմական ժողովրդոցն · որ ոք լինէր ճարտար ՚ի կռուել, ՚ի քսուել, ՚ի խաբել, ՚ի հայհոյել և յաղաղակել · այնպիսին յառաջանայր ՚ի կարգ բարձր աստիճանի եկեղեցականութեան, և պատիւ և շնորհս ընկալնոյր յաչս մեծաւորին և ժողովրդեան · ագանէր, հեծանէր, սպառազինէր, հարկանէր, այսքան էր արժանաւորութիւն նորին · և գիտել զՀայր մեր, զՀոգւոյ և զՊահպանիչ՝ բաւական էր ։ Յորժամ արտաքս չկօթակ լինէին գրիչն և կաղամարն, և որ զայնոսիկ ՚ի գործ ածէրն , սակաւք և յոյժ սակաւք էին ընթերցողք և գրագիրք ։ Այս այն աւուրք են , որպէս ասեն , մատով ցուցանէին զսեւ և զսպիտակ ճանաչողն , որք զայբն տեսանէին և զբենն ՚ի դիւան քարշէին ։

Ընդ նուազիլ գրասիրաց , մահ և քօլէրայն տիրեաց դրեանց , և զբազումս ՚ի նոցանէ մեռոյց ։ Դեռ քանի՞ ամք են զի լսեմք զանուն գրատան կամ թանգարանի ՚ի սուրբ Էջմիածին և ՚ի սուրբ Երուսաղէմ · այսու ամենայնիւ հանին տպագրութեամբ ՚ի լոյս ՚ի գրատանց յայնցանէ ինչ ինչ, որպէս և ՚ի գրոց Տաթեւու վանիցն՝ Պատմութիւն

Սիւնեաց Օրբէլեան ՚ի Շարս Հայ պատմագրաց էած ՚ի լոյս լուսահոգի Կարապետ վարդապետ Շահնազարեանց։ Եւ քանզի եկեղեցիք և վանորայք են գլխաւորապէս պահարանք գրոց, — ես չը կամիմ յիշել զորս ունին տեղաբնակքն թագուցեալ ՚ի տունս տունս, առաւել եւս գաղթեալքն աստ և անդ, որք առեալ ունին ընդ ինքեանս զսեպհական կամ զ՚ի ձեռս անկեալ գրեանս —։ յորս թէպէտ շրջեցաւ Նուիրակն Վենետկոյ Մխիթարեան ուխտին Հ․ Ներսէս ամօք ինչ յառաջ․ և էր զոր օրինակեաց․ էր զոր գաղեաց ծրարեաց ՚ի պարկին, և էած

՚ի կղզին Ս. Ղազարու․ բայց գիտեմ քաջ զի ոչ հանդիպեցաւ նա յամենայն տեղիս, և ոչ կարաց տեսանել, և տանել կամ գաղափարել զամենայն․ քանզի մերքս սովոր են ծածկել և չյայտնել քննողին և հարցանողին զբովանդակ զինչ և իցէն։ Մանաւանդ եթէ ծանիցեն թէ յուզողն և հարցանողն կաթօլիկ է։

Ահա գրանոց մի յԱմբրդօլու վանս ՚ի Բաղէշ, ուր հարուստ թուով ձեռագիրք գտանին, որպէս պատմէ համբաւն․ բայց արգիլեալ փակեալ մնան ՚ի գէճ խշտիս ընդ քարուկրաւ, զորոյ դրան փականաց բանալին ունի ասեն, որ երեսփոխանն ընտրէ եկեղեցւոյն. ոմանք ՚ի բանասիրաց, և յառաջնորդացն անգամ կամեցեալ են տեսանել, այլ չէ լեալ հնար. սակայն լուայ ՚ի յետին աւուրս զի ցանկ նոցուն գրեցին, և պահեն յԱռաջնորդարանի:

Անծանօթ մնան ինձ այլ վանորայք յայսմ մասին. տեսի միայն ՚ի սուրբ Առաքելոց վանս զերկու հատորս ճառընտրաց ընտիր մագաղաթեայ մանր երկաթագիր, և ՚ի լուսանցան նրբանկարս ծաղկանց և թռչնոց գծագրեալս, որոց դիրք մեծութեան կանգուն մի ՚ի լայնութիւն և քան զկանգուն առաւել յերկայնութիւնն է ։ Զքանիս 'ի նկարաց մկրատիւ հատեալ և հանեալ են, ընդ որ և զգիրսն՝ որ 'ի միւս երեսն ։ Լռեմ ասել թէ ե՞րբ, ո՞վ, և առ ի՞նչ զայն արարեալ ։

Իբր նախ քան զքսան ամ, ունէր Առաքելոց վանքն ոչ սակաւ ձեռագիրս զետեղեալ յարկեղս և եդեալ 'ի խորանին որ առընթեր Աւագ տաճարին յաջմէ կուսէ․ բայց այնքան անայցելու թողեալ էին զայնոսիկ, և անհոգ ըդ տանեաց նորին, մինչեւ յամս քանիս 'ի ձիւնոյ և յանձրեւոյ ծածկեալ ձեղուն, և ձիւնք և չաղախք թափեալ 'ի վերայ և 'ի մէջ արկեղցն, ապականեալ էր և փչացուցեալ զբաղումն : Զարդիս նոր վանահայրն Արժ. Յովհաննէս վարդապետ Մուրատեանն, խնամ ունի վասն մնացելոցն, և հոգայ զշինութիւն սուրբ տանն և տաճարին :

Իսկ 'ի վանսն սուրբ Կարապետին, ուր կացի ես ամս քանիս, դրեանք առ հասարակ տպագիրք և ձեռագիրք ընդ ձեռամբ լուսարարապետին էին, զորս պահէր յարկեղս 'ի մէջ 'ի տաճարին : Զնկարագիր աղէտից պահպանութեան և դարմանոյ նոցին գրել արդարև արժան է, բայց ես խնայեմ 'ի Ծերունին այն. այր արդարեւ միամիտ յայսպիսեաց սակի, և եթէ մեղադրիցեմ զորս պարտ իցէ մեղադրել, դատեն զիս իբրեւ պարսաւագիր ՚ի մասնաւորի այնմ ուխտին միաբանելոց, և կառավարելոցն. վասն որոյ վերըստին լռեմ։ Զայս և եթ ասեմ. յաւուրս վանահայրութեան Ս. Հայրիկին սկսաւ և յիմում փոխանորդութեան աւարտեցան նորաշէն գրադարանք կամ թանգարանք, յորս հոգի առեալ շարեցան մատեանք ամենայն. ոչ սակաւ գրեանս եւս յաւուրս մեր գնեալ յաւելաք ՚ի նոսին։

Չիք այնքան նշանաւոր թուով և նիւթով ձեռագիր յայս հռչակաւոր վանսն, անշուշտ կորնչեալ կամ ոչընչացեալ իցեն· քանզի չհաւատամ թէ արդեօք յամենայն աւուրս միաբանք վանուցս անգրասէր եղեալ են: Ցուցակ անուանցն ձեռագրացն որ անդանօր, յայսմիկ գրքոյկիս տամ 'ի տիպ: ընդ որ և Օրինակ մի Թըղթոյն Դիոնէսիոսի Արիսպագացւոյ 'ի Ննջումն Աստուածամօր կուսին· և Յիշատակարան մի 'ի Հարանց վարուց գրոց, որոց վասն չունիմ ինչ կանխաբանել, և ոչ զհաւատեաց ինչ երաշխաւորել, թողեալ հմտագունիցն 'ի զննին:

Շուշտեմ տպագրեալ իցէ՞ այս մասն Պատմութեան, որ յաղագս աշակերտութեան Մովսէսի և Դաւթի, շինող լինելոյ նոցա զքաղաքն Կարին, գնալոյ յԱթէնս, ուրանօր լինելոյ նոցա և յառաջանալոյ, և ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏՍ կարգելոյ. որ ունի նաև զնկարագիր արարողութեանց քննութեան ուսումնարանի հանդիսի, ուր ԱՆՑԱՂԹ հանդիսացեալն է Ներգեվանցին շինական. զդարձ նոցա 'ի Բիւզանդիոն, ուր պատահել Յոբնաղայ, և գոչել Խորենեան Արօյին՝ յանձնապաստան և ահագին իմն ձայնիւ. «Ճանաչե՞ս զիս, Յոբնաղ, ԵՍ ԵՄ ՄՈՎՍԷՍ, և սա ԴԱՒԻԹ»: Բարբառս այս և եթ շատ էր նկուն առնել զախոյեանն:

Ի սա պատմի սրտառուչ վերադարձն 'ի Հայաստան : Նոր ծագումն երկոցունց արեգականց 'ի մտից արեւու՝ յելս արեգական : Ողբ և մրմունջ վասն վարդապետաց ծնողաց հոգեւորաց : Մորմոք յաղագըս անկման արքային և արքայութեանն Արշակունի : Նահատակութիւնն ԿԱՐՄԻՐ Վարդանայ : Եւ այնուհետեւ լքանել գնալ ամփոփել Մովսիսին յանյայտ և յանշուք անկիւնս շինականաց · ցնցոտիս զգեցեալ, 'ի ցուպ յեցեալ · պայծառ Աթենացին՝ յաղբիւս Հայաստանեայց դարեալ թաքեալ:

Գիւտ հրաշագիւտ 'ի ձեռն հայրապետին Գիւտայ , որոյ 'ի տես և 'ի փառս երեսաց երգեաց բիծայն խորենացին աղաչանօք գեղջկականաց զայն մեղեդին վսեմ. «Ո՛վ Արքայակերպ, Տէր, Քահանայապետ, Սուրբ, և Հովուապետ բարի . . . »:

Խանդաղատիլ, փարիլ զալեօք ծերունւոյն՝ Հայրապետին մեծի. և զբիծայն Քաղաքադաշտին, ընդ որ խաղ առնէր մանկտին, վերակոչել 'ի մեծ աւագութիւն յաստիճան եպիսկոպոսութեան: Եւ որ զկնին:

Քաղուածք ինչ, կամ իբրու զծանօթութիւն վերջնոյ մասին պատմութեանս յիշեմ ընթերցեալ 'ի Բազմավէպն Վենետկոյ. բայց կարեմ ոչ ասել թէ՝ Արդեօք 'ի մասնէ յայսմանէ գրութենէ՞ էր, եթէ յայլմէ իմն օրինակէ։ կամ թէ յետ այնորիկ եղե՞ւ ոք հրատարակող զայս․ չիք իմ տեսեալ։ Քանզի և ես կարօտ մնամ բազմաց գրեանց Հայեցեաց տպագրելեաց, չունելով տեղի հաստատուն․ կամ պատահումն այնպիսւոյ բարութեան վիճակի, նստելոյ առ մնարօք գրատանց, և պարապելոյ յընթերցմունս գրենեաց։ Բայց և ո՞վ յազգի մերում վարդապետ, և այսըմ բարւոյ դիպեցեալ։

Ոճ գրչի ճառիս և պատմութեանս գեղեցկայարդ է․ և 'ի տեղիս տեղիս հայկաբանութեամբ վսեմ․ իսկ թէ ո՛ ոք իցէ հեղինակ սմին, և թէ անբիծ և անխառն իցէ՞ որպէս կանխաւն բնագրեալ· ասեմ ինչ ոչ· զի ինքնին տեսանի բանն :

Մատեանս՝ յորմէ գաղափարեցի զայս մասն յաղագս Դաւթի և Մովսիսի, պարունակէր երկարօրէն Հարցմանս Քաղկեդոնականաց և Պատասխանիք ՚ի Մովսէսէ և Դաւթայ· նաև Մեկնութիւն Պորփիւրի և Մեկնութիւն Քերականի. որպէս և ՚ի ճակատ գրոցս գրեալ էր «Այս ինչ «գիրքս խուն գտանի, էակք «Դաւթի և Մովսիսի : (Որ ուսանի) զբնաբանն Պորփիւրի, և «զքերականն Հոմերոսին, և «զմեկնութիւնն Մաժիստրո«սին Փիլիսոփայ Գրիգորին» :

Իսկ 'ի վերջ՝ յիշատակարանս այս . «Փառք Ամենա«սուրբ Երրորդութեանն Հօր «և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . «Ամէն ։ Արդ գրեցաւ գիրքս «այս, որ կայ 'ի սմա քերա«կանութիւն և բառ քերա«կանի, և մեկնիչ . և . . . «զոր տեսանէք, ձեռամբ «անարհեստ և մեղսաներկ «անձին Յովաննէս կոչեցեալ, «որ եմ Եւդոկիացի . Թվ. «ՌՁԳ ։ Արդ որ օգտիք 'ի «սմանէ ուսանելով կամ օրի«նակելով յիշեցէք 'ի տէր ան«նախանձ մտօք զխոցեալ հո«գիս մեղօք՝ մի ողորմեայիւ, «և Աստուած զձեզ յիշէ . «Ամէն» ։

Ի սոյն մատենկիս կցոր-

դեմք և զՇիրխան Մ. Սուքիասանց, և զնոր պատմութիւն ինչ Դաճրէշ Նաբէն, և Եղտէ Մէրղըժ, կամ Քէչէ Պօլօ, զորոց ունին տեսանել ընթերցողք՝ գրեալ յիւրեանց կարգին։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Գ. Վ.

* * *

ՅԱՂԱԳՍ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՀԱՅՈՑ

ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ԴԱՒԹԻ

ՈՐԴԻՔ լուսոյ և վերինն Սիօնի տեսանեմ զձեզ այսօր Աստուածային և երկնային լուսով փայլեալ 'ի վարդապետաց սրբոց հարցն. որպէս զարեգակն աննուազելի և անկարօտ, ահաւոր տեսլեամբ ճառագայթս արձակեալ և լուսաւորեալ զաշխարհս Հայաստանեայց. զանյաղթելին և զանպատմելին ասեմ զԴաւիթ և զՄովսէս աշակերտք և որդիք Սահակայ և Մեսրովպայ վարդապետացն՝ Հայոց մեծաց։

Արդ 'ի սոյն ժամանակի եղեւ կրումն թագաւորութեանն Հայոց. և արքայ Թէոդոս փոքր, տիրեալ աշխարհին Յունաց, 'ի Ճ· ամի թագաւորութեանն իւրոյ եղեւ չար հայհոյութիւն 'ի վերայ մարմնացեալ բանին Աստուծոյ. Նեստոր մետրապօլիտ Կ· Պօլսի ոչ խոստովանէր զբանն Աստուած մարմնով ծնեալ, այլ 'ի մարդ բնակեալ. քանզի ասէր՝ բնակութիւն ընկալաւ զմարմինն, և այլ անթիւ էր նորա հայհոյութիւնն որ 'ի վերայ Բ· բնութեանն և հակառակէր ընդդէմ ճշմարիտ վարդապետացն: Զի երանելիքն 'ի հին և 'ի նոր կըտակարանաց զպանիր, և զիւղ, և զձէթ, և զգինի մի ասացին. իսկ անիծեալն՝ զձուկն ջուր ասաց, և զձէթն և զգինին 'ի փայտէ, զի կամեցաւ ապականել զսուրբ աղուհացսն. և հրամայեաց թագաւորն ժողով լինել յԵփեսոս, Մ. եպիսկոպոսաց: Յոբնաղ Երուսաղեմի, մեծն Կիւրեղ Աղէքսանդրու, Յօհան Անտիոքայ, Պրոկղոս Կիւզիկայ, Թէոդորոս Անկիւրայ, Ս. Կղեստինոս Հռովմայ: Գրեն և առ սուրբն Սահակ գալ 'ի ժողովն: Իսկ նա ոչ չոգաւ, այլ թղթով միաբանեալ ընդ նոսա անիծէր զանօրէն Նեստոր: Յայսմ ժամանակիս եղեւ խնդիր պատասխանութեան ղըրոյն Հայոց, զոր ունէին, ԻԲ. գիր 'ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորոյ աշակերտ սրբոյն Գրիգորի: Իսկ սուրբն Սահակ և Մեսրովբ բազում աշխատութեամբ պէտս արարին, սովոյ և ծարաւոյ յոտանաւոր չարչարանաց 'ի լերինս տքնեալ զխ. տիւ և զխ. գիշեր, ոչ ինչ ճաշակելով բայց միայն յաղօթսն Աստուծոյ պարապեալ: Եւ լուաւ Տէր աղօթից նոցա՝ ըստ գրեցելոցն՝ թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ: Եւ 'ի տեսլեան գիշերոյն հրեշտակ Տեառն էջ յերկնից առ նոսա. և որպէս 'ի տուընջեան խօսէր ընդ նոսա, և յաման ինչ խեցեղէն՝ մատամբ նկարեալ տայր նոցա զգիրս Է.: Եւ զարթուցեալք 'ի քնոյն և զնոյն նշանակ ունելով. և գոհանային զԱստուծոյ, զատուողէն այնպիսի պարգևացն: Եւ զարդարեցաւ գիրն Հայոց բանիւք և արգեամբք. զի Երրորդութիւնն առաքէր և բանաւոր հողեղէն ընդունէր . որպէս առ Մովսէսիւ տուեալ տախտակս Ժ. պատգամացն , պատուիրան տանն իսրայէլի . և աշխարհս Հայոց գըրեալ մատամբն Աստուծոյ առ նոր իսրայէլս , որդիս սրբոյն Գրիգորի : Գային մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց , և տօն մեծ կատարէին զօրն զայն. բազում ընծայս և պատարագս՝ յաղքատս և 'ի տնանկս , 'ի խեղս և 'ի կաղս : Եւ եղեւ օրն այն մեծ և երեւելի 'ի մէջ ազգին Հայոց . և յետ սակաւ աւուրց արարին սկիզբն Թարգմանութեան հին և նոր կտակարանացս: Եւ լուեալ Թագաւորն Թէոդոս յոյժ ուրախանայր՝ և գոհանայր զԱստուծոյ մեծաւ գոհութեամբ.

և առաքէր առ սուրբն Սահակ և Մեսրովպ թուղթս գոհացողականս, և վասն թարգմանութեան գրենեացն, զի շուտով արասցեն զթարգմանութիւնն, մինչ ես 'ի մարմնի իցեմ․ զի մի՛ Արիոսականքն խառնեսցեն և աղտորեսցեն զբանս Աստուածաշունչ գըրոց գրենեացն։ Եւ հրամայեաց թագաւորն Եւթաղեայ՝ ցանկօք փակել տուն առ տուն, և վկայութիւն առ վկայութիւն, զի մի՛ ապականեսցեն հերձուածողքըն զգրոց պատուիրանսն։ Եւ հասեալ թուղթն առ սուրբն Սահակ և Մեսրովպ, և խնդիր արարին մանկանցն․ և ընտրեցին աշակերտս Ժ․ մտաւոր և սրագըլուխս՝ և լեզուս հրեղէնս ներկեալ 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ և ուսուցին զնոսա շնորհս վարդապետութեան լիով ընկալեալ յանձինս իւրեանց, և եղեն արք երեւելիք և կատարեալք շնորհօք Հոգւոյն սրբոյ ։ Եւ յետ աւուրց բազմաց առաքեցին արս Ե․ Սահակ և Մեսրովպ առ Թագաւորն Թէոդոս զի Թարգմանեսցեն ըզ գրեանսն ։ Դաւիթն անյաղթ կոչեցեալն փիլիսոփայ, և Մովսէս քերթողահայրն, իմաստասէրն Մամբրէ, և հռետորն Աբրահամ, և սոցին ժամանակիցն Պօղոս, առաքեցան 'ի կայսերական պալատն ։ Եւ Թագաւորն Թէոդոս յոյժ ուրախ եղեւ, և փառաւորութեամբ ընկալաւ զնոսա․ և զԴաւիթ, և զՄովսէս դաստաւորս կացոյց 'ի տանն հայրապետանոցին․ և 'ի Թարգմանութեան ոչ դադարէին · կամեցան հրամանաւ թագաւորին երթալ 'ի փիլիսոփայական քաղաքն՝ յԱթէնք։ իսկ թագաւորն խորհուրդ 'ի մէջ առեալ կամեցաւ շինել քաղաքս երկուս, և զնոսա կացուցանել վերակացու շինուածոյ քաղաքին, զի տեսանէր զնոսա յոյժ իմաստունս և հանճարեղս · և առաքեաց զնոսա 'ի Հայս շինել զկարնոյ քաղաք՝ և յիւրոց պաշտօնէիցն 'ի կողմն Հայոց աշխարհին յԱմիթ՝ զոր էր շինեալ զնա հօրն Աբգարու թագաւորին Հայոց։ իսկ Դաւիթ և Մովսէս որպէս զարս քաջս անդադար ընկիզբն արարին շինել զքաղաքն Կարնոյ, և հրաման թագաւորին սպառնայր, և խրատ նոցա զօրանայր և աճաւոր շինուածով երթայր քաղաքն և զօրանայր ․ և կանգնեցին բուրգն խոսրովային , և անահ 'ի մեքենայից ․ և պարիսպ երեք 'ի վերայ միոյ հիման ․ քերեալ և պեղեալ զհող երից պարսպին՝ զոր 'ի միջին և եթ կայր պեղել հրամայեցին մինչեւ 'ի պորտ քաղաքին , և վէմս անշարժս կրով զերեսս անդընդոց փակեցին , և 'ի վերայ միոյ հիման կանգնեցին երիս պարիսպս , և 'ի ներքս 'ի կողմ քաղաքին աստիճանս երկերիւրս մի առ միով յետոյ յետս՝ զի մի՛ դայթակղեսցի պարիսպն 'ի փորողացն ․ Նոյնպէս և 'ի դրանց կուսէ պարսպին աստիճանս երկերիւր մի առ միով յետոյ յետս , զի անահ լիցի 'ի փորողաց Թըշնամեաց քաղաքին ։ Եւ այլ հընարս հնարեցան զի թէ գուցէ գայցեն թշնամիք, և նեղեսցեն զքաղաքն և մուտ և ել ոչ տան առնել՝ արարին ներքնափոր 'ի մէջ քաղաքին, փորել 'ի ներքոյ գետնոյ խորագոյն, և գնացեալ 'ի մէջ դաշտին ճաշոյ մի գնաց ճանապարհ, 'ի տեղին ուր ժողով ջրոցն է և շամբ յոյժ, զի թէ նեղեսցեն զքաղաքն կարող են բերել անասնոց խոտ և այրելոյ եղէգն. և թշնամիքն զայս ոչ կարասցեն իմանալ: Եւ միւս կողմն քաղաքին նոյնպէս գետնափոր փակած մեծամեծ վիմօք, մինչև 'ի լեառն որ կոչի Այծուպըտկունք, թէ կարիք հասանիցեն հեծելոց՝ կարող են բերել ձիօք և հեծելօք և մտանել 'ի քաղաքն առանց գիտելոյ թշնամեացն:

Եւ վասն ջրոցն կարի գեղեցիկ է և վայելուչ, զի ոչ ոք է 'ի քաղաքիդ ոչ հարուստ և ոչ աղքատ որ ոչ ունի ջուրս անոյշս բերեալ զերեսօք անդնդոց· ապարանք և աշտարակք գեղեցկաշէնս և սրբագործս, փողոցք, և հրապարակք, սպանդանոցք և վաճառանոցք, սրբատեսիլ եկեղեցիք հրաշալիք տեսողացն, և դըրունք քաղաքին բարձրաւեւնս և լայնանիստ և կատարեալ պարըսպաւ վայելուչս, և բուրգքն ամենայն խոսքովայինք: Եւ պարապեալ յամենայն գործոց քաղաքին խաղացին գնացին յաշխարհն Յունաց առ Թագաւորն Թէոդոս, և լուեալ վասն քաղաքին՝ առաւել քան զառաջինն մեծարէր զնոսա, և հրամանաւ արքունի առաքեաց զնոսա յԱթէնս. և մեծաւ չքեղութեամբ խաղացին գնացին 'ի փիլիսոփայական քաղաքն: Դաւիթ, Մովսէս, Մամբրէ, և Պօղոս, և Աբրահամ: Եւ մտեալ յիմաստասիրական քաղաքն Դաւիթն և տուեալ զթագաւորական մատանին ցվարդապետն իմաստասիրաց, և առեալ 'ի նոցանէ յոյժ ուրախացան, զի 'ի վաղուց հետէ ըսպասէին նոցա գալստեանն, զի համբաւ բաղում ելեալ էր վասն նոցա յԱթէնս: Խօսեցան ընդ Մովսէս և ընդ Դաւիթ, և հաճոյականս խօսեցան ընդ նոսա, և հաւանեալ սիրական բանից նոցա, և վարդապետն հրամայեաց նստուցանել զնոսա յաստիճանսն զի անխափան ուսանիցեն զփիլիսոփայական ուսումն ։ Եւ սկիզբն արարին ուսման և երթալով երթային և զօրանային և տեղեկացեալ լինէին ուսման փիլիսոփայական ։ Գային և յԵգիպտացւոց Ասորւոց ։ Եւ յետ աւուրց բազմաց գային 'ի կապադովկացւոց աշխարհէն վարդապետք Յունաց , Գրիգոր որ յետ բազում չարչարանաց և հալածանաց կոչեցաւ Աստուածաբան, և Գրիգոր Նիւսացի և Բարսեղ կեսարացի , եւայլն , բանից փորձելով փիլիսոփայական արուեստիւ՝ զսոցանէ , ասէ ․ իբրև կատարեցան ամք ուսման՝ Դաւթի և Մովսէսի , Մամբրէի վերծանողի , և Պօղոսի և Աբրահամու ամք է ։

Արդ՝ սովորութիւն էր Աթենացւոցն, զի յորժամ կատարէին ամք է· բերէին զժամանակին ուսեալքն. և էր 'ի մէջ քաղաքին սիւն մի մեծ և բարձր յոյժ պըղընձի. և էր գրեալ Թագաւորական բանք է· Թագաւորի. բանք սակաւ և մեկնութիւն բազում, բան առ բան գլխաւորեալ. գրեալ առ Միբերիոսիւ Մուղղոսիւ Հռովմայեցւոցն Թագաւորաւն. և ըստ Եբրայեցւոցն, Թագաւորաւն՝ առ գերութեամբն Բաբելացւոց։ Արդ՝ որ զսոցա բանս կարդայր և մեկնէր, զնա՝ կայուցանէին վարդապետ ամենայն իմաստասիրական ուսմանն. զոր էր 'ի յայն է· ամ՛ն ուսեալ. և զո՛րչափ ժամանակս կա՛յր յԱթէնս, նա էր վարդապետ։ Եւ էր գրեալ 'ի սիւնն բանքս այսպէս· է· Թագաւորի ։ Սողոն Աթենացի՝ ՄԻ՛ ԻՆՉ ՅՈՅԺ ։ Թագաւոր Քէղոն Մակեդոնացի՝ ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ ։ Թագաւոր Թէղէս Մեղէսացի՝ ԵՐԿԻ՛Ր, ՄԵՐՁ ՎՆԱՍ ՄԵԾ ՅՈՅԺ։ Թագաւոր Դիաս Պիրենդացի՝ ԲԱԶՈՒՄՔ ՉԱՐՔ։ ԹագաւորՊիտապակոս Միդեղէնացի՝ ԺԱՄԱՆԱԿ ԾԱՆԻ՛Ր ։ Թագաւոր Պիտիանդրոս Կորնթացի՝ ՎԱՐԺՈՒՄՆ ԱՄԵՆԱՅՆԻ ։ Թագաւոր Կղէբուղոս Ջենդացի՝ ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ԱՆԲԱՒ։ Արք կատարեալք վարդապետութեամբ որ էին Կ· կացուցին առաջի սեանն· եթէ ո՛վ ոք է որ ձեռնեսցէ գբան Թադաւորացն, և ամենեքեան պշուցեալ հայէին ընդ երեսս սեանն· և անգիտելնային էր բանն այն 'ի Նոցանէ. և միտ եդեալ Դաւիթ և գաղտ 'ի միտսն սկսաւ մեկնել բան առ բան և իմացեալ եթէ ճշմարիտ գտի զմեկնութիւնն, և համարձակեալ էանց եկաց յատենին և ամենեքեան առ հասարակ 'ի նա հայէին, զի քաղաքն առ հասարակ եկեալ էին 'ի տեսիլ բանիցն: Եւ ելեալ Դաւիթ 'ի վերին աստիճանն, և ձեռօք սկսաւ զամբոխն խաղաղացուցանել, և վարդապետացն հրամայեաց զի լռեսցեն, և լռեալ դադարէին. և Դաւիթ որպէս զաման լուսեղէն սկսաւ ծագել զլոյս վարդապետութեան իւրոյ, և բան առ բան զծածկեալ թագաւորացն մեկնէր ահաւոր բանիւք. և ամենեցուն հիացեալ զարհուրեցան ընդ ճշմարիտ նըմանութիւն բանիցն յերկրախօս տուն տուն հանէր զբանն. և բերեալ ասպար ոսկի զարդարեալ ակամբք և մարգարտով. և Դաւիթ եդեալ 'ի վերայ ասպարուն և ընկերք ուսմանն իւրոյ, բարձեալ 'ի վերայ ուսոց և գըլխոց՝ ձայնեալ 'ի վերայ նորա անուն անյաղթ. որով կոչեցաւ Անյաղթ փիլիսոփայ. և զօրն ամենայն ածին ընդ քաղաքն 'ի շուրջ ձայնիւ ցնծութեամբ սրնգովք և փողովք. և Աստուածաբանն և Նիւսացին հաւանեալ ուսման Դաւթի. և կացուցին զԴաւիթ վարդապետ ամենայն Աթենացւոց։ իսկ յետ է. ամսոյն դարձան Գրիգոր Աստուածաբան և Գրիգոր Նիւսացին յաշխարհն իւրեանց կոչելով զնոսա Հայրապետական աթոռ, որով արժանաւորեցան նստել. իսկ Մովսէս և Դաւիթ կացին զամս Զ։

Արդ՝ եղեւ յետ փոխելոյ յաշխարհէս Գրիգորի Աստուածաբանի և այլոցն ամենեցուն ընկերաց իւրոց, և մեծին Թէոդոսի։ Նստաւ անօրէնն Մարկիանոս, և առեալ զքոյր Թէոդոսի թագաւորի, Պօղքեր անուն յաղանդից չար հերձուածոյն Նեստորի, որ Բ. բնութիւն, և Բ. կամք, և Բ. ներգործութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ ասէր՝ ըստ ոչ հարցն խոստովանութեան, զոր 'ի Նիկիայ և 'ի նոյն քաղաքն Կոստանդնուպօլիս և յԵփեսոս։

Յաւուրս յայսոսիկ բարձեալ էին սուրբ հարքն յաշխարհէս և սակաւ ինչ աւուրս յառաջ սուրբն Սահակ և Մեսրոպ հրաժարեալ յաշխարհէս. և տեսիլն ընկալեալ 'ի հրեշտակէն 'ի Վաղարշապատ քաղաքի զնուազիլ թագաւորութեանն և հայրապետութեանըն, և դարձեալ նորոգել զհայրապետութիւնն և զթագաւորութիւնն, զի չեւ էին արհամարհեալք . . . . :

Յայսմ ժամանակի Մարկիանոս թագաւոր որպէս քինախնդիր լեալ Նեստորի հանդերձ կնաւն Պողքիրաւ, հրամայեաց ժողով մեծ լինել 'ի Քաղկեդոն առ 'ի յապականել զկանոն սուրբ հայրապետացն և զքրիստոսասէր թագաւորացն, ուրանալ զմի բնութիւնն՝ որ 'ի վերայ մարմնացեալ Բանին ասացին: Գրեն 'ի Հայք տա սուրբն Ցովսէփ աշակերտ սրբոյն Սահակայ գալ եպիսկոպոսօքն Հայօք յուրացողական ժողովն Քաղկեդոնի։ Ցայսմ ժամանակի մեծ պատերազմ կարգեցաւ յաշխարհն Հայոց յանօրէն Ցազկերտէ, Պարսից արքայէ, զի թողցեն զքրիստոսական խոստովանութիւնն և դարձցին յերկըրպագութիւն արեգականն. իսկ քաջն և հզօրն ԿԱՐՄԻՐՆ Վարդան, որդի դստեր սրբոյն Սահակայ, ժողով արարեալ ընդդէմ Ցազկերտի 'ի պատերազմ արս ԿՆԹ· արանց քաջաց, որք կամէին մեռանել 'ի վերայ Քրիստոսի, զի խառնեսցի արիւն իւրեանց 'ի յարիւն մարտիրոսացն, որպէս պատմէ Ագէնացին Եղիշէ աշակերտ սրբոյն Մեսրովպայ ըղ պատմութիւն սորոյն Վարդանայ ։ Յայսմ ժամու եղեւ միաբանութիւն երից կամարարացն առ իրեարս, Սատանայ և Քաղկեդոն և Ցազկերտ, 'ի միում աւուր յարեան 'ի պատերազմ ընդեկեղեցին Աստուծոյ . . . . . . ։ Արդ եթէ սոքա հակառակ դտան հաւատոյ, սակայն կարմիրն Վարդան հանդերձ մեծամեծօքն Հայոց և դասուց հայրապետացն զմահ յանձն առին յԱրտազական դաշտին 'ի Նպատակ լերինն և յաշխարհին Աղուանից, խոստովանելով առաջի անհուն զօրացն զհաւատս ճշմարիտ որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին ըստ սորոյ հարցն, և կատարեցան մեծաւ հանդիսիւ արեամբ մահու . և յիշի 'ի մէջ Եկեղեցւոյ մինչեւ ցայսօր ժամանակի. որպէս պատմեաց Եղիշէ աշակերտ սըրբոյն Մեսրովպայ զիմաստութիւնն Վարդանայ: Եւ լուեալ զմեծի պատերազմէս Մարկիանոս և ամենայն տունն Հռոմոց ուրախ լինէին, զի վասն խառնակութեան հաւատոյ էր պատերազմ և ըզ յաղթութիւն իւրեանց համարէին. այսու կարծէին սփռել զաղանդն Քաղկեդոնի:

Յետ այսր ամենայնի անցից հրամայեաց Մարկիանոս դարձուցանել զՆեստոր 'ի հայրապետութիւնն. որ 'ի գալն սատակեցաւ չարաչար մահուամբ յանմաքուր տեղւոջ: Եւ ժողովեալ 'ի Քաղկեդոն եպիսկոպոսաց ԶՃԼԶ. 'ի սրբոց և յանսրբոց. Յոբնաղ Երուսաղէմի: Մեծն Դէոսկորոս

Աղէքսանդրի, որ գլուխ էր երկրորդ ժողովոյն Եփեսոսի. Մաքսիմիոս Անտիոքու. Ստեփաննոս Եփեսոսի. Լեւոն Հռովմայ. Եւսեբի Դորեզու. Անատօլիս Կոստանդնուպօլսի: իսկ Լեւոն Հռովմայ ոչ եկն 'ի ժողովն, բայց ետ բերել առ թագաւորն զթուղթն իւր զՃԴ. գլուխն առ Փլաբիանոս գրեալ, զի հաւանեսցին այնմ՝ ժողովեալքն որ 'ի Քաղկեդոն, զոր իմացեալ սրբոյն Դիոսկորոսի և ժողովոյն ընդ նմա խոստովանելով թշնամանեցին և որ ընդ նմայն էին յԵփեսոս, և առեալ թագաւորն զգրեալսն Լեւոնի ընկալաւ և ետ զատուցանել ըղ Դիոսկորոս և խնդրեաց 'ի ժողովոյն սահման ըստ գրելոյն Լեւոնի հայհոյութեան:

Իսկ ուղղափառ իշխանքն որ էին 'ի ժողովն՝ ասէին այսպէս առ եպիսկոպոսունքն ․ Այս է ժամանակ ձեր ճգնել 'ի վերայ հաւատոցդ , զի հաստատուն լիցի ըստ առաջին հարցն խոստովանութիւն ։ Եւ եպիսկոպոսացն ասացեալ, ոչ ումեք է իշխանութիւն ըստ հրամանի կանոնացն դնել սահման հաւատոյ ․ զի բաւական է մեզ այն՝ որ 'ի Նիկիայ և 'ի Կոստանդնուպօլիս և յԵփեսոս ։ Յայնժամ հրամայեաց թագաւորն Մարկիանոս զմիաբանեալ եպիսկոպոսունսն և զիշխանսն արկանել 'ի բանդ , զի թէ ոչ հնազանդեսցեն կամաց թագաւորին եղիցին սպատուհասեալք ․ և մեծաւ երկիւղիւ ահաբեկեալ եպիսկոպոսունքն և էին 'ի մեծ տարակուսանս՝ եթէ զիարդ լինիցի հնար զերծանիլ 'ի պատժոցն ։ Յայնժամ Յոբնաղ Երուսաղէմի եպիսկոպոսն հրամայեաց Ասկղիպեայ սարկաւագին կոստանդնուպօլսի առնուլ զսահման հաւատոյն , և դնել 'ի նմա Բ. բնութիւնս . այնու առ երկիւղի հաւանեալ եպիսկոպոսացն , զի այնիւ հնար լիցի զերծանիլ 'ի չար պատժոցն. առաքեցին զգիրն առ Թագաւորն և նա ոչ ընկալաւ զայն բանն . այլ ետ տանել զգիրն հայհոյութեան Լեւոնի , զոր ընթերցեալ մասն ինչ գլխոյն և իմացեալ զդառնութիւն բանիցն , և միաբան աղաղակ բարձեալ արտասուագոչ ձայնիւ ասէին . Այս բանիցս ոչ հաւատամք , և ոչ ընդունիմք . անհա պատրաստ եմք կապանաց և գեղարանաց, զի այս Պօղոսի Սամոստացւոյ է բանս. այսպէս և ոչ Նեստոր յանդգնեցաւ հայհոյել։

Յայնժամ Թագաւորն և կինն իւր եկին առ նոսա 'ի գիշերի 'ի բանդն և եղեն առ նոսա աւուրս Գ. և ոչ հաւատացին սուրբ հարքըն։ Իսկ ժողովեալքն 'ի Քաղկեդոն ոմանք յերկիւղէ հաւանեալ Թագաւորին և կնոջն նորա Պողքիրայ, և ոմանք ըստ Դէոսկորոսի հրամանացն լեալ հալածական վասն Քրիստոսի։ Եւ որք 'ի Քաղկեդոն ասացին ուղղափառքն. Եթէ ոք ասիցէ Քրիստոսի Բ. բնութիւն, նզովեալ եղիցի։ Եւ աշակերտքն Նեստորի ասացին. Եթէ ոք ասասցէ զմի բնութիւն՝ նզովեալ եղիցի ։ իսկ միաբան ասացին ուղղափառքն . Որ քան զերիս սուրբ ժողովն աւելի քարոզէ , նզովեալ եղիցի ։ իսկ Թագաւորն Մարկիանոս իմացեալ զբազմութիւն անիծիցն որ վասն իւր էր բանն , զի յոյժ յանդգնեցաւ , և հրամայեաց աքսորել զերանելիսն յաշխարհ հեռի . զՊետրոս եպիսկոպոս Անտիոքացի հանդերձ աշակերտօքն իւրովք սպանին սրով . և զԴէոսկորոս և զՏիմոթէոս , և զԱնատօլիս եղբայր Պետրոսի Անտիոքացւոյ և զՍտեփաննոս 'ի Կիզիկոն քաղաք աքսորեցին , և ապա յԵրակլիայ և 'ի Պամփագոնիայ , և անդ կատարեցան բարւոք վկայութեամբ 'ի վերայ Քրիստոսական հաւատոյս ։ Եւ զայս ամենոյն գրեաց 'ի Հայք Պետրոս Անտիոքացին, զի մի՛ միաբանեսցին չար պաշտօնէից քաղկեդոնի երեսպաշտացն և զՔրիստոս ուրացողացն: Շփոթումն մեծ արարին եկեղեցեացն Աստուծոյ, և զփառաւորս և զգլխաւորս հայրապետացն անարգեցին. և զանարգսն և զյոռիսն և զներքինիսն մեծարեցին, զոր Հոգին սուրբ որոշեալ էր յեկեղեցւոյ. և սահմանեցին զՔրիստոս բ. բնութիւն և բ. կամք, և բ. ներգործութիւն չարչարեալ և անչարչարելի, և մարմին ապականացու. և վասն այնր ապականեցին զհաց սուրբ պատարագին և ջրով աւանդեցին զարիւն պատարագին և աղով. զոր ոչ հրամայեաց Հոգին սուրբ. պատառեցին և զվարագոյր խորանին· բարձին և զխաչեցարն զպարծանս հրեշտակաց· բարձին և զծնունդն Ցեառն 'ի յունվարի ամսոյ Զ· էն փոխեցին 'ի դեկտեմբերի ԻԵ· որ է օրն այն օր ծննդեան անօրէն Արտէմոնի· վասն այնորիկ անօրէնն Արտէմոն յիւր օրն սահմանեաց զծնունդն փրկչին: Ուրացան և զկանոնսն Առաքելոցն, զոր ուխտաւորութեամբ ընկալան ամենայն եկեղեցիք ուղղափառաց: Եւ 'ի Քաղկեդոն սահմանեցին ապականել զսուրբ աւուրս աղուհացին 'ի ձուկն, 'ի ձէթն և 'ի գինին ըստ Լեւոնի· վասն այնորիկ զարմացաւ Սատանայ, զի զայս ամենայն խմացեալ յառաջ 'ի սրտից Քաղկեդոնի: Զայս ամենայն խմացեալ

Հայոց և Ասորւոց , և ուրացան զաղանդն Քաղկեդոնի , և զտօմարն Լևոնի · յետոյ բռնութեամբ դարձուցին Ասորիքն 'ի պէս պէս պատճառս զԾնունդն տեառն և զհաց սուրբ պատարագին · բայց զՔաղկեդոն բնաւ ուրացան Հայք և Ասորիք մինչև ցայսօր · · · · · · · · :

Յետ այսր անցից ժամանակացս և ահագին կոտորածին լուեալ զդառն համբաւ կըսկիծ աղէտիցս Դաւիթ և Մովսէս և ոչ հանդուրժեալ՝ կամեցան ելանել յաշխարհն Հայոց , և եկեալ 'ի Կոստանդնուպօլիս · և լուեալ վասն մահուան վարդապետացն Հայոց սուրբ հարցն Սահակայ և Մեսրովպայ · և վասն պատերազմացն որ 'ի վերայ քըրիստոսական հաւատոցն. և վասն կատարածին Վարդանայ և Նախարարացն Հայոց զօրացն. յարտասուս հեղեալ լային ղաշխարհն Հայոց ։ Եւ լուեալ վասն ժողովոյն Քաղկեդոնի և վասն չփոթմանն և խառնակութեանն եկեղեցւոյ, տրտմեալ վիրաւորեցան. և յիշեալ զպարծանաց մահն Հայոց զօրաց որ 'ի վերայ Քրիստոսի, ուրախացան մեծաւ ուրախութեամբ. զի վասն անուանն Քրիստոսի եղեն արժանի արեամբ ելանել առ Քրիստոս ։

Եւ լուեալ իմաստասէրքն քաղաքին պատմեցին Թագաւորին Մարկիանոսի և կնոջ նորա Պօղքերայ, եթէ Արք երեւելիք և փառաւորք 'ի Հայոց իջին յԱթէնք 'ի վաղուց հետէ. և յաւորքս առաքեցան առ մեզ Դաւիթ և Մովսէս աշակերտք սըրբոյն Սահակայ և Մեսրովպայ ։ Եւ լուեալ Թագաւորն ուրախ եղեւ վասն գալստեանն նոցա . և ասէ ցնոսա . ընդէ՞ր ոչ եկիք 'ի ժողովն մեր ։ Եւ նոքա ասեն . ի բազում չփոթմանէ մոռացաք ։ Եւ հրամայեաց կոչել զնոսա 'ի Թագաւորական պալատն . և էին ծերացեալք , և կերպարանօք և խօսիւք Աթենացիք ։ Եւ մեզադիր լեալ Թագաւորին՝ եթէ ընդէ՞ր եղեւ ժողովն առանց մերոյ գալստեան և կոչման ։ Յօբնաղ, ասէր, եպիսկոպոս պալատին, վասն զի զձեզ ոչ գիտէաք կենդանիս այլ մեռեալս ։ Մովսէս ասէր . ժողովքն որ 'ի Հռովմ է լեալ, ոչ է հնար առանց մերոյ ազգին վկայութեան · որպէս կոստանդիանոսի 'ի Նիկիա՝ և գալ Արիստակէսի · և 'ի սոյն պալատիս Թէոդոս՝ և գալն Ներսէսի · և եղբայր Թագուհոյդ յԵփեսոս Թէոդոս՝ և Թուղթ վարդապետացն մերոց Սահակայ և Մեսրովպայ ։ Բայց վասն մեր չկոչելոցս չէ այդ պատճառն · այլ զի կամեցայք ապականել զկանոն սրբոց հարցն, և ձայնել 'ի վերայ Քրիստոսի Բ· բնութիւն, և Բ· կամք ։ Եւ ասէ Թագաւորն, ըստոյգ ապականեցա՞ն կանոնք հայրապետացն ։ Եւ ասէ Մովսէս · Այո՛ ստոյգ չարչարեցաւ Քրիստոս։ Եւ դարձաւ Մովսէս 'ի Յոբնաղ, և այլայլեցաւ գոյն երեսաց նորա ընդդէմ նորա, և ասէ · Ո՛վ Յոբնաղ, ճանաչե՞ս զիս, զի ես եմ Մովսէս, և սա Դաւիթ. բազմահմուտ և գիտութեամբ ժբ. ազգաց, և պարծանք Աթէնացւոց, կենդանեաց և գերեզմանեանց, և առաւել Հայոց աշխարհին. և դու վասն մերոյին արարեր չար ժողով։ Եւ ասէ ցԹագաւորն. Հրամայեա՛ երկրորդ ժողով լինել 'ի պալատիս. զի բարձցուք զկարծիս որ կայ ընդ Հայք և ընդ Հոռոմք։ Եւ հաւանեալ Թագաւորն զի արասցէ ժողով· երկրորդ, և մատեան Յոբնաղ և չար խորհրդակիցքն նորա առ Թագաւորն և բազում բանիւք դարձուցին զնա 'ի կամս իւրեանց։

Եւ ասէ Թագաւորն. Պատրաստեացի Մովսէս և Դաւիթ խօսել ընդ վարդապետացն մերոց.

և այն բաւական է մեզ. զի ժողովոյ ոչ է ժամանակս այլ խօսելոյ. զի զոր հաստատեցաք՝ այլ չէ հնար շարժել, բայց յայլ ժամանակս: Եւ ասէ Մովսէս. Յամենայնի պատրաստ եմք ամենայն արուեստից: Եւ Մովսէս և Դաւիթ ասեն ցմիմեանս. Այս է ժամանակ մերոց խօսից. Եղիցի առ վաղիւն պատերազմ մեծ 'ի վերայ մարմնացեալ Բանին Աստուծոյ, որ միացաւ ընդ մեր բնութիւնս Քրիստոս Աստուած մեր: Եւ առ վաղիւն եկին առ թագաւորն. եկին և իմաստասէրք պալատին. եկն և Պողքեր թագուհին չար միաբանելովքն. և հարկեցին զՅորնաղ խօսիլ ընդ Մովսէսի քերթողահօրն. վասն զի Յորնաղ աշակերտ էր Նեստարի անիծելոյն մետրապօլտի Կոստանդնուպօլսի . . . . :

Հիացեալ Թագաւորն Մարկիանոս և ամենայն իմաստասիրական ժողովն, զի տեսին զնոսա անպարտելի և անսասանելի, լցեալ ահաւոր շնորհօք. զի որպէս զհոսանս գետոց էին 'ի պատասխանիս երկոքեանն, 'վասն այնորիկ այլ ոչ արարին քննութիւն. զի երեւեցաւ յայս բանքս հարցեալ՝ չարակից հոլովումն բանից պայքարմանց բաղկացեալ: Եւ հերքեալ գտան երեք հերեսիկոսքն Թշուառականք՝ յերիցս երանեալ երկուցն: Մովսէս ասեմ և Դաւիթ, կարկեալ զնոցա զաներասանակ լեզուսն, որք ափ 'ի բերան եղեալ առաջի, և ոչ ինչ կարացեալ խօսել. իսկ նոցա երկիրպագեալ երեսաց թագաւորին յանդիման մեծ աթոռոյն, և թագաւորն բարեբանեալ զնոսա մեծաւ գոհութեամբ և ասէ. Մեծ ես ո՛վ Մովսէս. և երանի աշխարհին Հայոց 'ի տեսանել զսուրբ կերպարանս ալեաց քոց: Աւետիս մատուցանէ Արեւմուտք Արեւելեան աշխարհին. կարօտիւ ողջունեն զձեզ եկեղեցիք սրբոց:

Իսկ Պօղքեր թագուհին վիրաւորեալ յոյժ՝ տեսանելով զնոսա ոչ յաղթեալ այլ յաղթող երևեալ: թագաւորն հրամայեաց 'ի բաց գնալ ժողովոյն և չնորհակալ լեալ Դաւթի և Մովսէսի: Իսկ ամենեքեան սկսան 'ի թարգմանութիւնս գրոց անդադար, ոչինչ համարելով զտկարութիւն, այլ 'ի բաց եղեալ զծերութիւնն ։ Եւ Թագաւորն յաւուրս տօնի սրբոյ Խաչին հարկեալ զմեծ փիլիսոփոսն զԴաւիթ, խօսիլ զբանս շնորհաց 'ի պատիւ սրբոյ Խաչին. և Մովսէս մեծարեալ զԴաւիթ զի խօսեսցի բանս ինչ. Եւ Դաւիթ կամեցաւ կատարել զհրամանս Թագաւորին՝ ելեալ 'ի վերայ բարձր ամբիոնին, յանդիման երեսաց սրբոյ սեղանոյն, և քահանայքն բարձեալ զնշանն տէրունական ։ Եւ Դաւիթ համբարձեալ զձեռս իւր խաչանման, կնքեալ նշանաւ խաչին և ասէր այսպէս ։ Բարձրացուցէ՛ք զՏէր Աստուած մեր, Մարգարէն ձայնէ. երկրպագեցէ՛ք պատուանդանի սրբոյ ոտից նորա. և ես զնոյն ձայնեմ ընդ

Հոգւոյն, և որ 'ի կարգին: Եւ հրաշաբան շարակարգեաց զգովասանութիւն սրբոյ խաչին և երկրպագեալ 'ի վերայ երեսաց իւրոց սրբոյ խաչին, և երկըրպագեալ թագաւորին և ամենայն ժողովոյն, էջ յամբիոնէն. և առ հասարակ ժողովն գովէին և բարեբանէին զԴաւիթ, և ձայնէին Անյաղթ փիլիսոփայ. և օրհնէին զաւուրն այնպիսի շնորհաց: Յայսմ ժամանակի կամեցան ելանել յաշխարհն Հայոց հանդերձ թարգմանեալ գրենիօքն, և առեալ աղօթս յեկեղեցւոյն և 'ի թագաւորէն: Իսկ թագաւորն տուեալ նոցա պարգեւս երեւելիս և մասն 'ի սրբոյ խաչէն. և ելեալ յերեսաց թագաւորին գընալով յաշխարհն Հայոց:

Ահա ծագեցան արեգակունքն յարեւմտից յարեւելս, ունելով զլոյս գերազանց 'ի շրթունս իւրեանց : Ահա ծագեցան փողքն հնչողականք աթենական նահանգէն , ունելով 'ի բերան փողոցն շունչս կենդանականս : Ահա՛ գալով գան վաճառականք բարձեալ նաւըս ակունս պատուականս և մարգարիտս գեղեցիկս՝ բերել կամելով Հայոց աշխարհին : Ահա՛ արեւմուտք նոր իրս կամի գործել . գիւղտն որ 'ի բազում ժամանակաց անհոգացեալ նստէր և որոճայր զորոճն կենաց՝ գայր բերէր զանձս Հայաստանեայցս : Ահա՛ լուծք եզանց ամոլք լծեալք յանիւ երկնաքարշ՝ 'ի բերել զաստեղս լուսեղէնս : Ահա՛ արեւելք հայեցաւ , և զոր ոչն ունէր էառ .

արեւմուտք՝ զոր ունէր կորոյս ։ Ունէր արեւմուտք և չունէր արեւելք • ունի արեւելք և չունի արեւմուտք ։ Զայն տայ արեւելք և առէ արեւմտից • ահա՛ զոր ունէիր՝ ճեմս առեալ և ճեմի՛ յաշխարհիս մերում զճեմն կենաց ։

Արդ արեգակնակերպն այն Մովսէս և Դաւիթ եղեալ յաշխարհն Հայոց, տեսանելով աւերեալ և քանդեալ զվայելուչ աշխարհն իւրեանց, յիշելով զկորուստ զօրացն Հայոց յանօրէն Յազկերտէն • լային և զմահ վարդապետացն իւրեանց • լային լալով ՚և նստէին վիրաւորեալ • և ոչ ոք էր որ մխիթարէր զնոսա ։ Մխիթարիչքն և պարծանքն Հայոց ազգին ահա վիրաւորեալ նստէին ։ Ահա՛ հնչողական փողքն՝ և ոչ ոք էր որ հարկանէր զձայն բարբառոյն քաղցր ։ Ահա՛ լոյսն՝ և 'ի խաւարի նստէին տեսողքն ։ Իբրև զայս ամենայն կատարած տեսեալ Մովսէս և Դաւիթ , ոչ կամելով յայտնել զինքեանս աշխարհին Հայոց · այլ գաղտ 'ի ծածուկ կամելով կեալ ։ Զի էին աթենականքն ծերացեալ և էր աշխարհն Հայոց աւերեալ ։ Իսկ Դաւիթ յայտնի կացեալ յաշխարհին Հայոց , և Մովսէս ծածկէր զինքն կարկատուն զգեստով և գծուծ կերպարանօք գնացեալ 'ի գեղ մի 'ի Քաղաքադաշտին և կացեալ անդ որպէս մուրացիկ և ոչ ոք էր որ ճանաչէր զնա · իսկ Դաւիթ և Մամբրէ , և Պօղոս և Աբրահամ , ընկերք

Մովսէսին կացին յերեւանի ։ Եւ էր 'ի ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տ· Գիւտ աշակերտակից Մովսէսի ։ Արդ ոչ զբովանդակ զվարսն ասացաք , այլ զբազումս թողլով զվարս ճգնութեան նոցա ։ Եւ արարին խնդիր Մովսէսի ընդ ամենայն աշխարհն Հայոց և ոչ գտին զնա · և կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն և իշխանքն առ հասարակ ունէին սուգս ոչ սակաւ վասն ոչ գտանելոյ զնա ։ Իսկ հայրապետն Գիւտ եղեալ հաստատէր զկարգս եկեղեցւոյ աշխարհին Հայոց · և հաստատեաց զաթոռ իւր 'ի Դըվին քաղաքի ։ Իսկ 'ի շրջելն իւրում եկեալ 'ի գեղն յայն՝ յոր էր թագուցեալ անթագչելի գանձն և անօթն , ամանն լուսոյ՝

Մովսէս , և ելեալ ընդ առաջ նորա առ հասարակ ծեր և տղայ , և բերեալ իջուցին զհայրապետն 'ի տեղի պատուական , և արարին ուրախութիւն մեծ զօրն զայն · և 'ի գինարբուս նստեալ իշխանքն և քահանայքն առաջի հայրապետին , նստեալ էր և Մովսէս 'ի բազմականին , և ոչ ոք ճանաչէր զնա՝ բաց յաշակերտէն · և սկսան ուրախ լինել · և մի առ մի յարուցեալ երգէին երգ առաջի հայրապետին : Եւ մի ոմն ասէ ցնա · Ո՛վ պատուական ծեր , ասա՛ բան ինչ շնորհաց հայրապետիս : Իսկ նա արտասուեալ և ասէ · Օտարական եմ · և նա համբուրէր զալխն նորա : Եւ յիշեաց Մովսէս զբան փրկչին , թէ ոչ կարէ ոք լուցանել զճրագ և դնել զմահճօք, այլ 'ի վերայ աշտանակի զի լոյս տացէ: Եւ յարուցեալ եկաց առաջի հայրապետին, և սկսեալ բանս երաժշտականս այսպէս. «Ո՛վ Արքայակերպ, Տէր, Քահանայապետ, Սուրբ, և Հովուապետ բարի, որ երկնայնոց նմանեալ . . .» և որ 'ի կարգին ասացեալ երիս տունս: Իսկ հայրապետն և բազմականքն հիացեալ և սկսան քննել զնա. և աշակերտ նորին յառաջ անցեալ և ասէ. Ո՛վ սուրբ հայրապետ, այս է կորուսեալն 'ի ձէնջ Աթենացին Մովսէս՝ աշակերտ սուրբ հարցն Սահակայ և Մեսրովպայ: Իսկ որպէս 'ի քնոյ ընդոստուցեալ հայրապետն և արտասուօք ձայնեալ, Ո՛վ արուեստականս ձայնս, ո՞վ տայր ինձ տեսանել զնա : Եւ ոչ կարաց ճանաչել զնա , զի էին Լ· ամք որ հեռացեալ էր 'ի Նոցանէ յաշխարհ հեռի : Եւ ասէր աշակերտն · Արդարութեամբ ասեմ, Այս է ծերացեալն Մովսէս : Եւ յարուցեալ հայրապետն լալով համբուրէր զսուրբ երես Նորա և զալիս : Եւ նստեալ լային զառաջ իսկ այն անցեալ նեղութիւնսն : Եւ դարձեալ ուրախանային ուրախութեամբ մեծաւ : Եւ եղեւ օրն այն մեծ և երեւելի · և ձեռնադրեաց հայրապետն զՄովսէս արք եպիսկոպոս · և ընթանային աշխարհն ամենայն 'ի տեսիլ Մովսէսի : Եկն և Դաւիթ և ընկերք իւր , և ուրախ լինէին առաւել քան զառաւել · և խընդրեցին 'ի Մովսիսէ գրով տալ նոցա զպատմութիւն Հայոց։ Իսկ նա սկսեալ գրէր զպատմութեան Հայոց պատմագիրն, և այլ բազում ինչ արար քննութիւն պէս պէս ճառեալ՝ 'ի տնօրէնութիւն Փրկչին. և բազում ինչ արար, և զքերականին մեկնութիւնն. և արարին և զեղանակս երաժըշտականացն ձայնաւորս բազումս 'ի պէտս եկեղեցւոյ։ Այլ վասն խօսից վարդապետութեանց ոչ էր առ ուրեք, վասն դառն ժամանակին արար։ Եւ Դաւիթ գրեաց զսահմանացն գիրսն զոր էր առեալ 'ի փիլիսոփայից. արար և զմեկնութիւն քերականին։ Եւ ոչ ժամանեցին ելանել 'ի խաղաղական ժամանակի, զի զառլցեալ և զամբաբեալ զգանձն զայն որ 'ի վաղ.

ժամանակաց 'ի յամանի պահեալ ունէին, զոր և ընդ իւրեանս տարան առ տուողն պարգեւացն, և ննջեցին բարեօք 'ի Քրիստոս : Արար և Մամբրէ և Պօղոս և Աբրահամ ճառս ոչ սակաւս պէս պէս խորհրդոց : Եւ յետ բազում ժամանակաց գրեաց զգիրս զայս (1), իբրև Աստուած հասոյց զմեզ 'ի ժամանակս այս, յորում Հ. և Ձ. էր Թուականն Հայոց։ Եւ Գուրգէն քարտուղարս Հայոց մեծաց և սուրբ Թագաւորացն Պռոյապաթար ստացող եղէ գրոցըս այսմ։ Բայց զարմանալի է 'ի նախկի յիշատակի գրոցս այսմիկ, Եթէ գրեցաւ գիրքս այս էակքս՝ հրամանաւ թարգմանեալ 'ի Յունաց 'ի Հայս Տեառն Յովհաննիսի Հայոց կաթուղիկոսի Գաբեղենեցւոյ 'ի ԽԷ. Թուականին Հայոց։ վկայէ՛ այսմիկ Սարգիս Արաբացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ։ Օրհնութիւն և գովութիւն և փառք և պատիւ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ։

---

(1) Ո՞ արդեօք, Մամբրէ՞ն : Եւ 'ի ստորեւն ո՞ այնր էջէ Պույսպաթարն. և թէ զի՞նչ նշանակեն բանքն որ զկնի և որ կանխագոյն էցեն շարժալք. Թուի թէ բառ կամ բան ինչ պակասի, որով և իմաստն անպարզ մնայ. որպէս և տեսանի 'ի տեղիս տեղիս եւս յայսմ շարադրութեան : Այլ մեք ոչ ինչ 'ի մէնջ յաւելաք, թողեալ հարազատ ըստ նախնական գաղափարին. միայն զյայտնի վրիպակս տառից ուղղեցաք ուրեք ուրեք :

(Ի նոյն մատենէ)

ՆԱՀԱՊԵՏՔ, ԹԱԳԱՒՈՐՔ, ԵՒ ԻՇԽԱՆՔ ՀԱՅՈՑ

Արդ՝ Նոյի անդրանիկն Յաբէթ՝ ծնաւ զԳամէր։ Գամէր ծնաւ զԹիրաս։ Թիրաս ծնաւ զԹորգոմ։ Թորգոմ ծնաւ զՀայկ։ Հայկ ծնաւ զԱրմենակ։ Արմենակ ծնաւ զԱրամայիս։ Արամայիս ծնաւ զԱմասիա։ Ամասիա ծնաւ զԳեղամ։ Գեղամ ծնաւ զՀարմա։ Հարմա ծնաւ զԱրամ։

Առաջին թագաւոր Հայոց Արշակ քաջ Պարթեւական, զկնի թագաւորէ Արտաշէս որդի նորա։

Երկրորդ թագաւոր Արշակունի՝ Արշակ որդի Վաղարշակայ։

Երրորդ թագաւոր Հայոց Արտաշէս՝ որդի Արշակայ։

Չորրորդ թագաւոր Հայոց Տիգրան՝ որդի Արտաշէսի։

Հինգերորդ թագաւոր Հայոց Արտաւազդ՝ որդի Տիգրանայ։

Վեցերորդ թագաւոր Հայոց Արամ՝ որդի Արտաւազդայ։

Եօթներորդ թագաւոր Հայոց Աբգար՝ որ և Աւագ այր կոչի։

Ութերորդ թագաւոր Հայոց Սանատրուկ՝ քեռորդին Աբգարու։

Իններորդ թագաւոր Հայոց Արշակունի ազգաւ եղեւ Երուանդ։

Տասներորդ թագաւոր Հայոց Արտաշէս՝ որդի Սանատրկոյ։

ԺԱ. թագաւոր Հայոց Արտաւազդ՝ որդի Արտաշէսի։

ԺԲ. Տիրան եղբայր Արտաւազդայ :

ԺԳ. Տիգրան վերջին եղբայր Տիրանայ :

ԺԴ. Վաղարշակ Բ. որդի Տիգրանայ :

ԺԵ. Թագաւոր Խոսրով՝ որդի Վաղարշայ հայրն Տրդատայ :

ԺԶ. Թագաւոր Հայոց Տրդատ՝ որդի Խոսրովու :

ԺԷ. Թագաւոր Հայոց Խոսրով՝ որդի Տրդատայ :

ԺԸ. Թագաւոր Հայոց Տիրան՝ որդի Խոսրովու երկրորդի :

ԺԹ. Թագաւոր Հայոց Արշակ՝ որդի Տիրանայ :

Ի. Թագաւոր Հայոց Պապ՝ որդի Արշակայ :

ԻԱ. Թագաւոր Հայոց Վարազդատ՝ ազգաւ Արշակունի :

ԻԲ. Թագաւոր Հայոց Արշակ և Վաղարշակ՝ որդիքն Պապայ Արքային։

ԻԳ. Թագաւոր Հայոց Վռամշապուհ՝ եղբայր Խոսրովու։

ԻԴ. Թագաւոր Հայոց Արտաշէս՝ որդի Վռամշապհոյ։

Յաղագս թէ ընդէր բառնալոյ թագաւորութեան Արշակունեաց ո՞յք եղեն տեսողք Աշխարհին Հայոց, այլոց ազ-

[illegible] յեղենք։

Յետ Արտաշրի Թագաւորի՝ Սպարապետ Հայոց եղեւ Վարդան, որդի Համազասպայ՝ թոռն սրբոյն Իսահակայ 'ի դստերէ նորա Շուշանայ։ Սա պայազատեաց զամս Ե. եկաց Սպարապետ Հայոց 'ի փոքուն Թէոդոսէ և հատատեցաւ 'ի Վռամայ Պարսից արքայէ : Սա աստուածային սիրովն լցեալ՝ սաստկեաց զուրացողսն հաւատոյ զիշխանսն Հայոց : Սպան զանօրէնն Շաւասպ Արծրունի , և փախստական արար զմարզպանն Մշկան : Ձերբակալ արար զպիղծն վնտոյ և կենդանւոյն այրեաց զնա յատրուշանի կրակին 'ի Դվին . և զորդի նորա Շիրոյ՝ 'ի վերայ բագնին կախեաց զփայտէ . և 'ի տեղի բագնին շինեաց եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի : Սա ընդ ընկերացն զօրավարաց վասն 'ի Քրիստոս հաւատոյն կատարեցաւ վկայական մահուամբ 'ի մեծ պատերազմին :

Երկրորդ՝ եղեւ Վահան Սպարապետ Հայոց որդի Հմայեկի եղբօրորդի սրբոյն Վարդանայ ։

Սա յաւուրս սրբոյն Յօհաննու Մանդակունւոյ՝ յաղթեաց քաջապէս ամենայն եկելոցն 'ի վերայ իւր ։

Կացուցանի մարզպան 'ի Վաղարշէ Պարսից թագաւորէն, և շինէ զբազում եկեղեցիս․ տիրէ ազգիս Հայոց զամս իը․ վախճանի բարի անուամբ ։

Պարոն Վարդ՝ եղբայր քաջին Վահանայ՝ եկաց 'ի մարզպանութեան զամս երեք․ սա ապստամբեալ 'ի Խոսրովու Պարսից արքայէն՝ սպան զմարզպանն Սուրէն 'ի Դվին քաղաքին, և ինքն հանդերձ այլովք նախարարօք չոգաւ 'ի ծառայութիւն Յունաց․ և ընդ չարխաճին Պարսից եկեալ 'ի վերայ իւր մաշեաց 'ի սուր սուսերի ։ Պարոն Դաւիթ Սորատելատ և զօրաւոր Հայոց տիրեաց յաշխարհիս Հայոց 'ի ժամանակս Հերակլի կայսեր զամս երեսուն ։

Պարոն Թէոդոս 'ի Ռշտունեաց՝ իշխեաց ամս ԻԵ ․ էր բարեպաշտ իշխան 'ի ժամանակս Եզրի կաթուղիկոսի ։ Սա զօրավար պատուեալ 'ի կայսերէն Յունաց , դիմակալ եղեւ Հագարացւոց և հիւսիսական ազգին Հոնաց ։ Պարոն Համազասպ մեծ իշխանաց իշխան , տիրեաց ամս եօթն , յոյժ ընթերցասէր և վարժ յամենայն հրահանգս արհեստից ։

Պարոն Աշոտ առաջին թագաւոր յԱնի 'ի Բագրատունեաց ազգէ՝ որդի Սմբատայ սպարապետի Հայոց։ Այր հսկայաձեւ անձնեայ և թիկնաւէտ , զուարթերես , մեծիմաստ և քաղցրաբան· որ յետ վախճանի հօրն՝ կացեալ յիշխանաց իշխան Հայոց ամս ԼԱ, ապա օծաւ թագաւոր· և հինգ ամ թագաւորեաց յԱնի, ընկալեալ զթագ յերկուց թագաւորաց, յիսմայէլացւոց և Յունաց։ Արար քաջութիւնս բազումս, և երեւելապէս շքեղացոյց զկարգ աշխարհիս Հայոց· և հնազանդեցոյց զբազում ազգս հիւսիսականաց ընդ իւրեւ։

Սմբատ որդի Աշոտոյ թագաւորեաց ամս ԻԴ։ Էր յոյժ իմաստուն և բարեպաշտ· արար բազում քաջութիւնս, և պատուեցաւ յերկուց թագաւորաց, Յունաց և իսմայէլացւոց։ Եւ յետոյ դաւով ըմբռնեցաւ յոստիկանէն Տաճկաց· և դառն տանջանօք ընդ առնացի անդամս եղէգն մխեցմամբ՝ վասն 'ի Քրիստոս հաւատոցն վկայական մահուամբ կատարեցաւ 'ի Դվին քաղաքի ։

Աշոտ որդի Սմբատայ, թագաւորեաց ամս ԻԵ ։ Սա պատուեցաւ 'ի Կոստանդին կայսերէն Յունաց, և բազում մարտ պատերազմի մղեալ քաջութեամբ, յինքն գրաւեաց զաշխարհն Հայրենի, և կոչեցաւ Շահնշահ ։

Աբաս որդի Սմբատայ թագաւորեաց ամս քսան և չորս 'ի յԱնի ։

Աշոտ որդի Աբասայ թագաւորեաց յԱնի՝ ԻԷ ։

Սա՝ ՁՌ զօրօք օգնական լեալ Յօհաննու Զմշկիկ կայսերն Յունաց, մեծապէս փառաւորեցաւ 'ի նմանէ ։ Եւ նոյն Յօհաննէս Զմշկիկն էր ազգաւ Հայ՝ յԵրապօլիս քաղաքէ , որ այժմ ասի Զմշկածագ ։

Սմբատ Շահնշահ որդի Աշոտոյ՝ թագաւորեաց ամս ԺԳ ։

Սա էր եղբայր Գագկայ , և թագաւորեաց յԱնի ։

Գագիկ եղբայր Սմբատայ թագաւորեաց ամս ԼԶ ։

Սա եհար զզօրս Պարսից և ձերբակալ արար զօրավար նոցա․ և յետոյ հարկեալ ետ զքաղաքն Անի կայսերն Յունաց , և ինքն գնացեալ բնակեցաւ 'ի Կապադովկիայ․ և անդ դաւով սպանաւ 'ի Յունաց ։

Գագիկ երկրորդ՝ յամենայն տեսակս իմաստութեան վարժ և կիրթ էր ․ և իբր դախոյեան ընդդիմանայր ամենից յառարկելն և 'ի պատասխանելն աստուածաբանութեամբ և փիլիսոփայութեամբ · մինչ զի յորժամ դիպէր 'ի կաճառս վարդապետաց, լռէին ամենեքեան սոսկալով, և յոտին կանգնելով ասէին, թէ լուռ կացէք վարդապետն եկաւ ։

Էր սա որդի Արասայ Շահնշահի՝ որ թագաւորեաց 'ի Կարս քաղաքի ։ Եւ երբ որ Աբօլան սուլթանն Պարսից յետ հարկանելոյ զԱնի՝ եկն 'ի վերայ սորա և կոչեաց յերկրպագութիւն իւր, հնարս խորհեցաւ զերծանիլ 'ի խամ-թէքլիֆէն, վասն որոյ զգեցաւ սեաւ զգեստ և նստաւ 'ի վերայ սեաւ բարձի ։ Եհարց հրաւիրակն զպատճառ սգոյ կերպին, նա ասաց թէ, Յորմէ հետէ մեռաւ բարեկամն իմ Տուղրիլ եղբայրն Աբօլանայ՝ զգեցայ զգեստս զայս : Հիացաւ հրաւիրակն եւ չոգաւ պատմեաց սուլթանին · եւ նա եկն առ Գագիկ ամենայն բանակաւն 'ի Կարս, եւ զգեցոյց նմա զգեստ թագաւորական :

Իսկ յետ աւուրց եթող Գագիկ զԿարս 'ի ձեռս կայսերն Յունաց, եւ էառ փոխանակ նորա զբերդն Ծամընդու · եւ անդ բնակեցաւ :

Յօհաննէս եւ Աշոտ եւ որդիք Գագկայ թագաւորին Անւոյ թագաւորեցին ամս ծ.Ը :

Յօհաննէս էր այր ամենայն գիտութեամբ ճոխ, յամենայն իրս նախահոգակ, հեզ եւ բարի վարուք : Իսկ Աշոտ էր սրտեայ, և առիւծաբարոյ. մինչ զի զարքայն Վրաց զզրահաւորն՝ միով հարումամբ ընդ երկուս ճեղքեաց: Արջառս այս (դուցէ Ըռջալս) կամելով միահեծան թագաւորել, ոչ չատանալով Վասպուրական գաւառօքն, ասպականէր զգաւառըն Անւոյ: Եւ Յօհաննէս զի խաղաղասէր էր, զբոլոր գաւառն նմա ետ, և ինքն զառօրեայ կեանքն անցոյց յԱնի:

Ռուբէն ազգական Գագկայ թագաւորեաց ամս ի: Սա էր այր քաջ և սրտեայ. ՚ի թուին Հայոց ՆՃԻԷ: Որ զօրացեալ նախ էառ զամրոցն Կոպիտառայ, որ ՚ի Կիլիկիայ. և ապա ել ՚ի լեառն Տօրոս, (որ է երկայնանիստ և ձասանիանընդհատ մինչև ՚ի Հընդիկս՝ յերկուս բաժանելով զԱոխայ) և անտի իջեալ էառ զլեռնային կողմանս փռիւգիոյ Այոնիլու, 'ի բաց վանելով զՅոյնս 'ի վրէժխնդրութիւն արեանն Գագկայ ։ Ի սմանէ սերեալ թագաւորքն 'ի Կիլիկիայ թագաւորեալք կոչեցան Ռուբէնեանք ։

ԹԱԳԱՒՈՐՔ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ

Կոստանդին որդի Ռուբէնի թագաւորեաց ամս Ե ։ Սա կալաւ զդղեակն Վահկայ, և անդ հաստատեաց զթագաւորութիւն 'ի ստորոտն Տօրոս լերին ․ սա արար սաստիկ պատերազմունս և ընդարձակեաց զթագաւորութիւն 'ի Կիլիկիայ ։ Թորոս որդի Կոստանդեայ թագաւորեաց ամս Ի ։ Սա էառ զվրէժ արեանն Գագկայ, զի էառ զբերդն Կօնդրոսկաւիս և կործանեաց զնա. և վասն մեծամեծ քաջութեանց նորա գաւառն Կիլիկեցւոց կոչեցաւ յանուն նորա՝ երկիր Թորոսի։ Լեւոն եղբայր Թորոսի թագաւորեաց ամս ԺԵ։ Սա էառ զՄամեստիա և զայլ քաղաքս Կիլիկեցւոց. էառ և զԱզազ քաղաք Ասորւոց 'ի Տաճկաց. և տիրեաց ամս ԺԵ։ Եւ վասն քաջութեան կոչէին զնա՝ նոր Աժդահակ. և յետոյ կալանաւորեալ եղեւ 'ի կայսերէն Յունաց երկու որդւովքն Ռուբինաւ և Թորոսիւ։

Թորոս որդի Լեւոնի զերծեալ 'ի կալանաց յետ մահուանն Փէրփէրուժէն կայսերն՝ եկն 'ի Կիլիկիայ և ժողովեաց սա ինքն զամենայն իշխանս Հայոց, և վերըստէն յինքն կորզեաց զԿիլիկիա, և ետ պատերազմ ընդ Մանուէլ նորա, և յետոյ հաշտութիւն արարեալ յոյժ պատուեցաւ 'ի կայսերէն ։ Սա երկիցս յաղթեաց Յիկոնիոյ սուլթանին ։ Պարոն Մլեհ եղբայր Թորոսի թագաւորեաց ամս է ։ Պարոն Ռուբէն որդի Ստեփանեայ թագաւորեաց ամս իբ ։ Սա խաբկանօք ըմբռնեալ յիշխանէն Անտիոքայ բանտարկու, և ապա ազատեալ դարձաւ 'ի Կիլիկիա, և արար բազում բարութիւնս, և կրօնաւորեալ մեռաւ 'ի մէջ կրօնաւորութեան ։

Լեւոն եղբայր Ռուբէնի առաջին թագաւոր Կիլիկեցւոց թագաւորեաց ամս ԼԵ ։ Սա վերստին էառ զԿիլիկիա ․ սա եւ ընդդէմ Թուսանեմայ սուլթանին, և եհար զանհամար զօրս նորա ։ էառ և զՍավրիայ ։ Եւ վասն բազմաց քաջութեանցն՝ եղեւ առաջինն 'ի տոհմէ Ռուբինեանց , որ ընկալաւ զթագ յինքնակալէն Ալամանաց և 'ի կայսերէն Յունաց , և օծաւ թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա , 'ի թուին Հայոց ՋՃԽՋ ։

Փիլիպ փեսայ Լեւոնի և որդի բրնծին Անտիոքայ՝ թագաւորեաց ամս երեք . որոյ կին էր Զապէլ դշխոյն , որ յետոյ եղեւ կին Հեթմայ որդւոյ Կոստանդեայ ։ Հեթում փեսայ Լեւոնի դստերբ Փիլիպին ծնեալ՝ թագաւորեաց ամս ԽԵ ։ Սա գնաց առ Մանկօ խանն Թաթարաց Խաթայի , և դարձոյց զնա 'ի հաւատս Քրիստոսի . և ընկալեալ 'ի նմանէ ըղխնդրուածս իւր՝ վառօք դարձաւ

՚ի Հայս . և էառ զԳերմանիկ և Պէհեսդին : Եւ մինչ էր նա յերկիրն մեծ խանին , եւ սուլթանն Եգիպտոսի էառ զԱսորիս . և մտեալ ՚ի Կիլիկէ գերեաց զԼեւոն որդին Հեթմայ : Զոր թափեալ Հեթմայ եհան Եգիպտոսէ և թագաւորեցոյց փոխան իւր , և ինքն կրօնաւորեալ Մակար կոչեցեալ՝ մեռաւ կրօնաւորապէս : Լեւոն որդի Հեթմայ թագաւորեաց ամս ԺԸ : Այս Լեւոն առատաձեռն էր և առաքինի վարուք , անյիշաչար և սիրելի ամենեցուն : Շինեաց զբազում ուսումնարանս վարդապետաց , և պատուէր զուսումնասէրսն , և վասն քաջութեան իւրոյ պատուեցաւ ՚ի Թաթարաց : Հեթում մեծ որդին Լեւոնի թագաւորեաց ամս Բ :

ցետոյ կրօնաւորեալ 'ի կարգի սրբոյն Ֆրանչիսկոսի՝ կոչեցաւ Յօհաննէս. և ոչ կամէր դնել թագ 'ի գլուխ իւր վասն ուխտին։ Եւ կուրացեալ յեղբօրէ իւրմէ Սմբատայ՝ վերստին յԱստուծոյ ընկալաւ զտեսութիւն. և անդրէն կալաւ զթագաւորութիւն ամս երկու։

Եւ միաբանեալ ընդ Կասանոսի կայսերն Թաթարաց, ետ սաստիկ պատերազմ ընդ Թուրքմանց։ Ետ Կասանոսի կայսերն զդուստրն իւր և դարձոյց զնա 'ի հաւատս Քրիստոսի։

Սա արար բազում երգս շարականաց սկզբնատառիւք անուան իւրոյ։ (Սորա է և ստանաւոր 'ի վերջն Ոսկանի Աստուածաշնչին։) Օշին հօրեղբայր Լեւոնի Թագաւորեաց ամս ՃԳ․ 'ի սորա աւուրս եղեւ ընդհանրական ժողովն Ատանոյ ։ Լեւոն որդի Օշնի թագաւորեաց ամս երեք․ 'ի սորա աւուրս եղեւ ժողովն Սսոյ ։ Որ յատենաբանելն 'ի ժողովն սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ, սաստիկ թանձ խոսսառւկի ըմբռնեալ մեռաւ 'ի տիս երիտասարդութեան ԼԳ․ ամաց․ զի այնպէս խնդրեալ էր յԱստուծոյ, թէ յորում պահու գտանիցիմ 'ի փրկաւէտ և 'ի հաճելի գործ ինչ քեզ ծառայութեան, ընկալցիս զհոգի իմ․ և եղեւ այնպէս ։ Կոստանդին ազգական Լեւոնի որդի Պաղդնի թագաւորեաց ամս եօթն ։

Պարոն Ջիւան թագաւորեաց ամ մի ։ Սա էր հօրաքեռ որդի

Լեւոնի ։ (1) Կիտ եղբայր Ճիւանի թագաւորեաց ամս երկու . զսա ընդ եղբօրն սպանէին Հայքն տիրասէրք ՌՃ թուին ։ Լեւոն վերջին թագաւոր՝ թագաւորեաց ամս ԺԱ · և բարձաւ թագաւորութիւն Հայոց 'ի Կիլիկիոյ ՌՃԺԱ թուին Հայոց ։

---

(1) Իբրեւ ցանկ առ ձեռն ունելոյ զանուանս Հայ նախահարց եւ տիրապետաց Հայաստանեայցս, հաւաքեալ այսօրինակ չգիտեմ յումմէ՞, եդաք աստանօր, զհարազատութիւն անուանց եւ շարադրութիւն զնոյն պահեալ, առանց բաղդատելոյ եւ սրբագրելոյ. եթէ իցէ տեսանել անուն ինչ կամ բառ 'ի ցանկիս յաւելեալ կամ պակաս կամ երբեք նոր, մի՛ ոք արհամարհեսցէ զգրածն, քանզի 'ի ձեռագիրս այսպիսիս պատահի բանասիրաց յուշ գալ վասն բառին կամ անուանն՝ որ ըստ ոմանց սխալ թուի, բայց նոր իմն լոյս ածէ այն 'ի քննին եւ 'ի խոյզ մտանել հնութեանց. եւ գտանել նոր անձն մի կամ հանդամանս պատմականս թափեալ եւ մոռացեալ 'ի մտաց նախնի պատմողաց ։

Հրատարակիչն .

* * *

Օրինակեալ 'ի ձեռագրէ մատենէ Աստուածաբանութեան Դիոնէսիոսի Արիսպագացւոյ անուանեալ. 'ի 1867 ամին. 'ի Սուրբ Կարապետի վանս Մշոյ:

Թուղթ Դիոնէսիոսի Արիսպագացւոյ՝ առաջին եպիսկոպոսի Աթենացւոց քաղաքին: Զոր գրեաց նա պատասխանի թղթոյն Տիտոսի եպիսկոպոսին Կրետացւոց, յաղագս ննջման սուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու:

Ծանիցէ եղբայրութիւնդ քո ո՛վ վսեմականդ Տիտէ, քանզի 'ի ժամանակի յորժամ հանդերձեալ էր ելանել յաշխարհէ և յաշխարհայնոցս, այս է՝ առ 'ի յերկրաւորս Երուսաղէմէ , և մտանել 'ի խորանսն լուսոյ վերինն Երուսաղէմի . անմեկնելի հրաժարմամբ յաւերժապէս առ 'ի մէնջ , ըստ ներքին մարդոյն , տարփողական հոգւով սիրով Աստուածամայրն , յայնժամ դասք առաքելոցն սրբոց իսկ և իսկ ըստ ակնարկութեան 'ի բարձանց վսեմականն կամաց Աստուածային հրամանէն համահաւաքեալ 'ի վայրկեան ժամանակի , առ 'ի բոլոր ազգաց՝ ուր էին վիճակեալք առ 'ի քարոզութիւն Աւետարանին կենաց, գտան եկաւորեալ համագումար միաբանութեամբ 'ի սուրբսն արդարև , ըստ այնմ թէ , Ուր լուծումն մարմնոյ , անդ և արծուիքն ժողովեսցին . փայլելով շուրջ պամենախեմ կուսական մարմնովն : Ուստի յայնժամ ապա յանդիման երկոտասան ճառագայթ Աստուածամուխ առաքելական գնդին : Ի բոլոր շրջապատոյս եկեալ սեռից հաւատացելոց սրբոց դասուց հրաժարեալ յամենեցունց , միջնորդութեամբ սրբամատոյց և սրաթռիչ որ առ Աստուած աղօթիւք տարածեալ 'ի բարձունս զամենասուրբ և զանհպելի զձեռս իւր՝ հայելով յուսափափագ տենչանօք առ որ ծնեալն 'ի նմանէ Աստուած մեր և որդի իւր , յուսով մեծաւ հատոյց , որպէս խունկ անոյշ աւանդեալ զամենասուրբ հոգին իւր 'ի ձեռս Տեառն . և այնպէս պարապարդեալ առ 'ի հրեշտակականն դասուց վերացաւ որպէս զփայլակն 'ի գերարփի յաւետախաղաց փառս վերինն Երուսաղէմի ։ Ուստի յայնժամ ապա ողբերգական արտասուաթոր հառաչանօք մանաւանդ թէ յուսապատար խնդութեամբ և հրճուողական հնչմամբ սրբոցն Առաքելոց և բոլորից սպարապտոյտ կեալ հաւատացելոցն յօրինեալ, բարեպաշտապէս զմարմինն Աստուածընկալ ըստ օրինի ննջեցելոցն , զկեցեալն 'ի վեր քան զօրէնս հասարակաց հոգեշնորհ երգովք , և ծաղկազարդվարդապետութեամբք զնոյն ասել Աստուածաբանականն արտաճառութեամբ ըստ պատշաճին պիտոյից ; և ձայնիւք սաղմոսաց , բարձեալ Առաքելոցն 'ի վերայ Աստուածարեալ բազկացն իւրոց զմարմինն ամենասուրբ ստուգապէս զմայր լուսոյ և զգանձ՝ պատճառ անապական կենաց ազգի մարդկան, ըստ ակնարկութեան 'ի վերուստ հասարակաց փրկչին ստորիջեալ վաղվաղակի հրացեալ Աստուածամուխ հրոյն կայծակմամբ եղեալ 'ի տեղւոջ կոչեցեալն Գեթսեմանի լսելով մինչեւ յերիս աւուրս 'ի վերայ Ամենասուրբ թաղմանն պսաղմոսերգութիւնս հրեշտակականս ձայնից, և այլ ոչ եւս:

Վասն որոյ 'ի հաւատարմութիւն այսոցիկ իրակերտութեանց գտաւ ումն մի առ 'ի նոցունց իսկ առաքելոցն որոց՝ նուազեալ առ 'ի թուոց նոցա 'ի ժամանակի զուգահաւաքմանն. որոյ եկեալ յետոյ և բռնազբօսեալ զԱռաքեալսն առ 'ի ցուցանել Նմա ակն յայտնի զգանձն անկողոպտելի, զմարմինն վսեմական ամենօրհնեալ կուսին, հարկաւորեալ յայնժամ լնոյր տարփումն եղբօրն. բացեալ զգերեզմանն գտին ունայն և թափուր առ 'ի սուրբ մարմնոյն. և յայնժամ զգացեալք անդուստ 'ի միտ առին, թէ յետ դադարելոյ հրեշտակական սաղմոսերգութեանցն՝ փոխադրեալ եղև մարմինն սուրբ 'ի ձեռն Նորին իսկ հրաբուն սերից զօրացն համբարձեալ դերաշխարհապէս, 'ի տեղի մեծարգի և լուսապատիւ փառաց. որ գիտէ ինքն միայն, որ հրաշիցն է Աստուած, ծածկեալ առ 'ի բոլոր զգայ աշխարհէ. Նմա փառք յաւիտեանս. ամէն:

(1869 ՓԵՏՐՎԱՐ 10)

Յիշատակարանս 'ի յետակէր Ճառընտիրի օրինակեալ է 'ի Ս. Կարապետ Մշոյ։

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որ ետ կարողութիւն անզօր անձինս Թադէոսի՝ հասանել յաւարտ երկնաշնորհ գրոցս որ կոչի Ճառընտիր. 'ի ՌԳՁ Թըւականս, որ է տանուտէր Ջըրհոսն, 'ի գիւղաքաղաքս Բաղու, ընդ հովանեաւ Լուսաւորչի 'ի դառն և 'ի նուրբ ժամանակի։ Որ այլազգիքն զօրացեալ են 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց և անուղղայ գնացիցս մատնեալ է զմեզ Աստուած 'ի ձեռս նոցա ։ Եւ դարձեալ մխիթարիչ լինի մեզ սուրբ Հոգին, թէ մի՛ տըրտմիք , զի տրտմութիւն ձեր յուրախութիւն փոխեսցի ։

Ի խնդրոյ պատուական և սըրբասէր Կարապետ վարդապետի որ ստացաւ զգիրքս 'ի յարդար ընչից իւրոց՝ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց ։

Արդ որք հանդիպիք վարդափթիթ բուրաստանիս՝ ընթեռնըլով և օգտելով, յիշեսջիք յաղօթս ձեր զվերոյասացեալ զն· վարդապետն և զծնողսն իւր զԱռաքելն և զԵղիսաբէթն և զամենայն արեան մերձաւորսն և զհոգեւոր հայրն զՄարտիրոս վարդապետն , և մի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, և մեղաց թողութիւն խնդրեցէք։ Այլ և աղաչեմ, միով Աստուած ողորմիւ և զիս զմեղուցեալ Թադէոս գծողս յիշել, և զծնողսն իմ զկարապետ երէցն, որ խիստ ջանաց 'ի հետ թղթիս 'ի ձգելն և 'ի կոկելն, և զմայրն իմ զՄարգարիտ՝ որ օր առուր պատրաստէր զկերակրիկն իմ, և զմեծ հայրն իմ զՏէր Յովհաննէսն, որ 'ի ՌՂԴ· թուականին փոխեցաւ առ Քրիստոս, և կողակիցն իւր. և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ հարք և եղբարք, յորժամ ընթեռնուք յիշեցէք 'ի Քրիստոս զվարպետն իմ զԽաչատուր սարկաւագն։

Ի ՇԼԷ· թուականին եղեւ արհաւէրք 'ի բազում տեղիս, և կոտորեցաւ ազգն Տաճկաց։ Զի յաշխարհն Ջաղաթային բազում պատերազմունք, և արեան հեղումն եղեւ։ Եւ Մորայ Սուլդանն և Հոռոմոց խոնդքարն՝ զմիմեանս ջարդեցին և կոտորեցին։ Եւ մեծ Սօֆի Արտաւէլ քաղաքին, ժողովեաց թղթով իւրով զամենայն սօֆիսն իւր յամենայն երկրէ։ Զի էր սահմանք և սովորութիւն նոցա՝ որ յամենայն ամի մութթային 'ի կոչն նորա յամենայն աշխարհէ. կարմրագտակ Սօֆիքն, և զինուորէին նմա իւրեանց թօշակօքն, և փոխանակ առնելոյ 'ի նմանէ՝ ինքեանք տային նմա բազում ոսկի և արծաթ։ Եւ յամենայն պատերազմունս ընդ որ երթայր՝

յօժարութեամբ կռուէին և մեռանէին առաջի նորա · որ և ես հիացեալ եմ և հիանամ ընդ այնպիսի միամտութիւնն ։ Զի սքանչելեօք համբաւէին զանուն նորա , եթէ ցամաք ոտիւք անցանէ 'ի վերայ գետոց , և թաղսեալ կացնաւ իւրով կտրէ զքար և զերկաթ և զամենայն ինչ · որ ժողովեաց յայսմ ամի իբրև քառասուն հազար արս , և գնացեալ խաբէութեամբ եմուտ 'ի Շամախի · և զամենեսեան որ 'ի ձեռն էած 'ի Քրիստոնէից և 'ի Տաճկաց , զարս և զկանայս սրով կոտորեաց · և զքաղաքն ամենայն հրով այրեաց՝ կումաշօքն , և որ ինչ էր 'ի նմայ ։ Եւ զմանր տղայքն ետ ժողովել առ ինքն , և դիզեալ 'ի վերայ միմեանց Ե·

եւ Զ. եւ ինքն հարեալ 'ի վերուստ Նիզակաւ՝ անցուցանէր մինչ 'ի ներքին տղայն, եւ վերուցեալ Նիզակաւն կանգնէր. եւ տղայքն աղիողորմ Թալկանային ոտիւք եւ ձեռօք 'ի ծայրս Նիզակացն. եւ նա ծափս հարկանէր ուրախութեամբ եւ ասէր. Այս է ճըշմարիտ ղազայն: Եւ զանասունսն զամենայն զձի, եւ զջորի, զուղտ եւ զոչխար՝ սրով կոտորեաց: Եւ այնպէս ոչ խնայեաց 'ի մարդ եւ յանասուն: Զոր գոյժ արկեալ տէրն Շամախու 'ի Թաւրէզ՝ առ փաշահ փեսայն իւր Ազուպ, եւ ծանոյց նմա: Եւ նա յուղարկեաց զիշխանն մեծ Սուլէման բազում զօրօք, որ գնացեալ ջանիւ մեծաւ մարտեան, եւ յաղթեալ կոտորեցին առ հասարակ զամենեսեան ։ Եւ յինքեանց եւս չարք մեռան ։

Դարձեալ 'ի սոյն ամի, եղեւ Աստուածասաստ բարկութիւնն 'ի Սոփիան կողմերոյ երկրին ։ Եւ մօտ 'ի վանքն Ապարանից՝ գեօղ մի Սոփինոց Ադաբուք անուն, և բազում նեղութիւնս անցուցանէին ընդ Աբեղայսն, և կտրէին հանապազ զջուրս վանացն, և ոչ տային թոյլ հանդչել նոցա ։ Եւ յաւուրս բուն բարեկենդանին, մի ումն 'ի նոցանէ հարսանիս առնէր որդւոյ իւրոյ, և ամենեքեան ժողովեցան անդ, և արարին նմանութեամբ կատակ բազում ։ Եւ ապա բերեալ կողով մի եղին 'ի մէջ իբր զսուրբ սեղան՝ և աղիւս մի 'ի վերայ որպէս զԱւետարան, և բերեալ սնաւ ջլով շըներ (շունս)՝ և կացուցին շուրջանակի, և եդին անուանս նոցա զվարդապետացն, և զեպիսկոպոսացն, զոր ճանաչէին: Իսկ Բ. ալեւորք՝ խրատ ետուն նոցա և ասեն. Մի՛ առնէք զայդպիսի կատակդ. այդ մեծ գունահ է ձեզ, որ զպեղծ շներդ 'ի սրբակաց ծառայքն Աստուծոյ կու նմանեցուցանէք: Եւ նոքա եւս առաւել մոլեալ 'ի չարէն, և բերեալ զոմն կերպարանեցին սուտ մեռեալ՝ զի յետոյ յարուցանիցեն, և ոչ յարեաւ. այլ զառհաւատչեայն ընկալաւ զյաւիտենից մահուն: Եւ ապա բերեալ բրդեալ հաց տային շանցն՝ յօրինակ հաղորդի: Եւ նոյն ժամայն եղեւ Աստուածասաստ բարկութիւն 'ի վերայ նոցա, զի եղեւ դղրդումն և ճայթումն ահագին, և յահեղ որոտմանէն ամենեքեան սատակեցան, որ 'ի տանն էին, բաց յԲ· ծերոցն։ Եւ եկեալ իշխանն Դերջնոյ ետես զահագին գործն և զարհուրեցաւ· և սուր քարշեալ կամէր զմնացեալսն ինքն կոտորել։ Զոր ոչ ետուն Մոլնայքն թոյլ, վասն որոյ հանեալ զմնացեալսն 'ի գեղջէն, և փոխանակ նոցա կացոյց քրիստոնեայս · և արար հայանոց 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ այսպիսի սքանչելեօքս՝ հաստատեցան հաւատացեալքն առաւելապէս 'ի հաւատս ճշմարիտ։

Դարձեալ կրկին անգամ Աստուած ողորմի ասացէք Կարապետ վարդապետին և ծնողացն

Առաքելին և Եղիսաբէթին և քըւերն Մահտեսի Հռիփսիմին, և ամենայն արեան մերձաւորացն և հոգեւոր հօրն Մարտիրոս վարդապետին ։

(1868 ՅՈՒՆՈՒԱՐ 16)

Օրինակեալ 'ի ձեռագիր Աստուածա-
շունչ մատենէ, որ 'ի Կտուց
Անապատն Վանայ:

Ի վերջ Աւետարանին Ղուկասու գրեալ·

Փոխածէր ննէք	Փոխածէր ննէք
(ՄԱՐԳԱՐԱՅ)	(ՄԱՐԳԱՐԱՅ)
ննքայ նեան	ննքայ նեան
Գարանէրեն	Գարանէրեն

«Ես Շոռոթցի խօջայ Մարգարէս ստացայ տառս Աստուածական որ կոչի Աստուածաշունչ, և ետու վախմ յեկեղեցին (Բառս երկուս ջնջեալ) . . . . . *Շոռոթայ,*

որ կոչի սուրբ Յակոբ , յիշատակ և փրկութիւն հոգւոյ իմոյ . Նաև ծնողաց իմոց Հայրապետին և Ռուստիանին , և պապին իմոյ Մարգարին և մամին իմոյ Խունծուն . իսկ ամուսնոյն իմոյ Նազլուխանին , և չքնաղազարդ որդւոց իմոց Սահակին և Զաքարիային , և հանգուցեալ որդւոց իմոց Սուքիասին և Նազարին , և դստերաց իմոց Փամթանին , Անիկամին և Մարգարտին : Եւ հանգուցեալ եղբօրն իմոյ Նադար չահին , և քեռց իմոց Խունծին , Փորոսին և Գուլուն . և հարսներանցն Մարիամանցն , և դեռաբուսիկ թոռանցն Հայրապետին (տող մի ամբողջ անհետ էր) և այլ ամենայն արեանառու մերձաւորաց իմոց . Ամէն :

Եւ արդ մի՛ ոք իշխեսցէ հանել զայս (բառ մի պակասէր) 'ի դրանէ սուրբ եկեղեցւոյս· եթէ ոք յանդգնեսցի հանել զնոսա իմոց կամ օտարաց, մասն Յուդայէ և 'ի կայենէ առցէ։ Ամէն։ Թուին ՌԴԸ»։

Ի վախճան Աստուածաշնչոյն, 'ի վերջ բանիցն հանգստեան Յօհաննու Աւետարանչին գրեալ յիշատակարանէն մասն ինչ։

. . . «Գեղադէշ և շնորհաշուք յորդիս Սիովնի անդրանիկն, սնեալ սրբութեամբ Շոռոթեցի խօջայ Մարգարէն, սիրող եղեալ սրբազանից կտակարանաց, գիտելով խոհեամ ընտրութեամբ զսնոտի կենցաղս անհաստատ բերուն։ Յաղագս որոյ զձեռն յուույ 'ի գործ արկեալ մեծաւ տարփանօք և ստացաւ զանհամեմատ փարթամութիւնս. և որ պահէն մշտնջենապէս. տալով ընդ սգալի յոլովութեան գանձուցս, և զանչափ յօժարութիւն ըղձից, և ստացաւ զպատուական մարգարիտս զայս 'ի վարժումն և 'ի վայելս ներհուն և սրբազան մանկանց Սիովնի. և նորաբոյս ոսկեբողբոջ Աստուածատուր հարազատ ծիրանածին և բարենշան զաւակացն, Սահակին և Զաքարին, և հանգուցեալ որդւոցն առ Քրիստոս՝ Սուքիասին և Նազարին։ Եւ Աստուածապաշտ և երկիւղած և մեծահաւատ ծնողաց իւրոց, պապին՝ Փշրուկ Մարգարին. և մամին՝ Խօնծին. և հօրն՝ մահդասի Հայբասլետին. և մօրն՝ Ուստիանիին, մեծայոյս և երկիւղազարդ ամուսնոյն իւրոյ Նազլու խան» . . . (Նուաղըն հատեալ ասր)։

Ի սկիզբն Թղթոց Պօղոսի Առաքելոյն գրեալ։

« Ես Փշրկենց Խօջայ Մարգարէս կամաւ և յօժարութեամբ սրտիւ իմով ստացայ զայս Աստուածաշունչս ծաղկափթիթ, և ետու գրել ոգւով ուրախութեամբ, և եդի 'ի դրունս սուրբ եկեղեցւոյս (տող մի ջնջեալ) և յիշատակ հոգւոյ իմոյ»։

Ի վերջն երրորդ Թագաւորութեանց գրեալ։

« Կարդացողք տառիս, յիշեցէք անարժան զծօղ սորին, մեղաւոր է· աւարտեցաւ Աստուածաշունչս թուին ՌՂԸ· ին, 'ի հայրապետութեան Տ· Տ· Փիլիպպոս կաթուղիկոսին, և թագաւորութեանն Պարսից փոքրին Շահաբասին· և ստացաւ զսա Խօջայ Մարգարայն Շոռոթեցի մականուն փշրուկ (1)· (ղձեռոյգրեալ

---

(1) Շոռոթ է աւան առ բերան Սիւնեաց աշխարհին, և Փշրուկ Մարգար Խօջայն՝ այր երեւելի 'ի տոհմ և ընչեղ, որոյ սերունդ գայ յանգի յազնուական այրն՝ ծանօթն բազմաց ազգայնոց Մ· Մազաք աղայն Մուրատեանն, որ այժմ բնակի 'ի Բանկալթի թաղն Բերայի Կ. Պօլսոյ։ Զազգաբանութիւն այսմ տոհմի հրամանաւ Վեհ· Կաթողիկոսի Տ· Մատթէոսի 'ի գիր եհար Ադամ վարդապետ Տէր Նիկողոսեան՝ վանահայրն Ս. Թովմայի վանուց Ագուլեաց, 'ի 1860 թուականին, քաղեալ 'ի զանազան յիշատա-

[illegible] նըչնէ) ։ Հայր մեր որ յերկինս. Ծաղկեցաւ գիրքս 'ի յվաչորաւաշաղախ բանասիրէ» ։

Ի սկիզբն գրոց Եսթերայ գրեալ ։

«Ծաղկեցաւ տառս Աստուածաշունչ Նուաստ տխեղծ Յովան-

նութեանց երկրին բնիկ հայրենեաց նոցա, որք գտանին 'ի Հոռոմ աւան և 'ի շրջակայս նորին՝ 'ի բանաւոր աւանդութեանց բնակչաց գաւառին, 'ի տապանագրաց և 'ի զանազան յիշատակագրոց ։ Ըստ տեղեկագրոյն՝ յորմէ և բանքս կարգին, ազգատոհմութիւն այսմ ցեղի՝ ցուցանի յարմատոյն Սիսակայ որդւոյն Գեղամայ Հայկազնեայ սերեալ և ընդ դարս դարս Նախարար կոչեալ տանն Սիւնեաց. որպէս և յաւուրս տիրապետութեան Պարսից պատուեալ Տանուտերական իշխանութեամբ. 'ի սոյն տոհմէ Աղա Մուրատն Դաւթեան նէս բանի սպասաւորէ Շոռոթեցւոյ որդւոյ Վարդան քահա-

---

Դիւանաբէգ էր Ղահուէֆի Իսմայէլ Պարսից արքային՝ կարգեալ ՚ի վերայ քաղաքաց և աւանաց Սիւնեաց աշխարհին. որոյ որդին Փշրուկ հազարապետ ժառանգէ պատուոյ և պաշտօնի հօրն. և այսպէս անցանէր գայր յորդւոց յորդի հասուցեալ առ Աղա Աւետիք Զաքարեան Մուրատեանց։ Յաւուրս բռնակալութեան Թահմազ Ղուլի խանին վտարանջեալ ՚ի հայրենի տանէն Աւետիքն և եղբօրորդին իւր Աղա Ղազար Աւագեան՝ հասանեն հաստատեն զբնակութիւն իւրեանց ՚ի Կարս՝ յամին 1732. և անտի ՚ի Կ. Պօլիս հատուած եկեալ բնակի Աղա Ղազարն՝ յամին 1769. Որդի սոյն Ղազարին՝ Մարտիրոս. որդի Մարտիրոսին՝ Առաքել. որդի Առաքելին՝ Գրիգոր քահանայ, և որդի Տ. Գրիգորին՝ Մ. Մաղաք Աղայն։

Իսկ վերոյիշեալ Աղա Աւետիքն Զհանւայի · Թուին Ռ·ՂԸ· Օգոստոսի ի»:

Մուրատեանց 'ի խաղաղիկ երկրին գտանայ վերստին յիւր բնիկ գաւառն և աւան, վարելով զնոյն իշխանութիւն Տանուտէրականն, այն է Մելիքութիւն:

ԳԱՄԲԱՐԱՆ

Ս. ՍՈՒՔԻԱՍԱՆՑ

Ի հիւսիսային արեւելակողմն Իննակնեան վանից սուրբ Կարապետին Մշոյ, յայնկոյս Քարկէոյ լերին, առ ստորոտով Բինգէօլին 'ի Վարդօ, մերձ 'ի գիւղն հայաբնակ Կոնդէմիր, է գիւղ մի Խնալու անուանեալ, ուր բնակին ռայա Քիւրդք երկրագործք: Ի 1873 ամին, 'ի գարնան, Հայք Կոնդէմիրայ նախ գրով և ապա բերանացի ազդ արարին 'ի սուրբ Կարապետի վանս, եթէ Քիւրդ ումն յԽնալու՝ 'ի պեղել զհիմունս շինութեան տան իւրոյ, երեւեցաւ 'ի ներքոյ երկրին գերեզման խոր իբրեւ կանգունս երկուս, որոյ կափարիչ վէմն ունի քանդակեալ յերեսս տառս հայկականս ։ Եւ երկուք ոմանք 'ի կոնդէմիրցւոյ իբրու ծանօթք պատմութեան, պնդէին թէ՝ իցէ այն գերեզման Սուքիասանց, յարմարաբանեալ զՍուկաւէան՝ 'ի ծաղկաւէտ և ջրաբաշխ լեառն Բինգէօլի ․ և զոր ինչ գրէ պատմութիւնն վասն Սուքիասանց, ջան 'ի գործ արկանէին հաստատել զոր կարծէինն ։ Ընտրեցաւ Եսայի վարդապետ Ղեւոնդեանց 'ի միաբանութենէ վանուցն գնալ 'ի քննին իրացն ․ և տուեալ շրջապատել զայն շիրիմ քարակուտիւ և կաւապատով, վերադարձաւ 'ի վանս, ածեալ ընդ իւր զհետեւեալ գիծս տառից որ 'ի վիմին, և զչափ և զորպէսն նորին, զոր գնեմք աստանօր. ոչինչ այլ ինչ յաւելեալ 'ի մէնջ զարդիս. թողլով քննող պատմագիտաց, և հայրենագէտ ուսումնասիրաց զննել թէ իցէ՞ այն տապան արդարեւ Սուքիասանց, եթէ այլոց ճգնաւորաց սրբոց, կամ արանց ականաւորաց նահատակաց առաքինեաց։

«Սուքիասանց անուանեալ գերեզմանս այս ունէր վէմ դամբարանի մի և եթ, որոյ տեսակն էր խճախառն որձաքար. երկարութիւն վիմին՝ վեց թիզ և չորս մատ, իսկ լայնութիւնն՝ թիզս երիս։ Կոփեալ և յղկեալ զերեսս վիմին. և 'ի վերայ քանդակեալ տառքն՝ եղծեալ փշրեալ. իսկ զորս մարթ էր ընթեռնուլ և օրինակել, այս և եթ է ».

Ա՛ Ս՛ Գ՛ Ե՛ Ր՛ Զ՛ ՆԱՀԱՏ՛ ԱՐԴԱՐՈՑ

Յաղագս սրբոց Սուքիասեանց վկայից ազգային պատմիչք մեր դրեն թէ, էին սոքա արք փառաւորք և պատուաւորք եկեալք յԱլանաց ընդ Սաթինկայ թագուհւոյ Արտաշէսին մերոյ երկրորդի Արշակունւոյ բարեբաղդ. և մեծ արքային 'ի Հայս, որոց հանդիպեալ Ոսկեանց քահանայից աշակերտելոցն 'ի Ս. Թադէոսէ Առաքելոյն, ուսեալք և մկրտեալք քրիստոնեայ, թողեալ զփափկութիւն և զփառս տանն Արքայութեան Հայոց մեծաց, չոգան ճգնեցան 'ի ջրաբաշխ լերինն՝ յանդիման Նպատայ, և հրամանաւ արքային Ալանաց նահատակեցան անդանօր. և լեառն այն յանուն Ս. Սուքիանոսի անուանեցաւ Սուկաւէտ, որ ըստ բազմաց՝ է Քէօսէ տաղ : Իսկ զմարմին սրբոցս ծածկեալ, գրեն, Աստուած՝ յայտնել 'ի յետին ժամանակս, առ 'ի տալ նշան մխիթարութեան ազգիս Հայոց : Իսկ թէ զի՞նչ իցեն նըշանն ժամանակին և յայտնութեանն, գիտեն որք զպատմութիւնս վերծանել գիտենն :

Ցանկ Ձեռագիր Մատենից 'ի վանս Սուրբ Կարապետին Մշոյ :

14 հատ Ս. Աւետարան, արտաքոյ գրատանց, գտանին 'ի սուրբ տաճարին. արծաթապատ, և ոսկեզօծ. յորոց երեքն ընտիր մագաղաթեայ և բոլորագիր, և մինն յերից անուն գրեալ մատամբ արքային Հեթմոյ :

6 » Ս. Աւետարան ևս՝ մաշեալ :

3 » Անալօճիայ :

1 » Ընտառք նորաշոյն մըտածմանց :

2 » Աստուածաբանութիւն Դիոնէսիոսի (Արիսպագացւոյ)։

1 » Աստուածաբանութիւն Յօհաննու Դամասկացւոյ։

1 » Աստուածաբանութիւն Պրոկղի։

1 » Աստուածաբանութիւն բարոյական, Անտօնի։

1 » Աստուածաբանութիւն Ուղ և Ծուծ (անուանեալ)։

1 » Աղբիւր բացեալ։

1 » Աստուածաբանութիւն Հաբէրդի։

1 » Ատենախօսութիւն Ներսէսի Լամբրոնացւոյ։

1 » Աստուածաբանութիւն հաւաքածոյ։

1 » Բացայայտութիւն կարգաց և արարողութեանց սուրբ եկեղեցւոյ Հայոց։
2 » Բուն տումար Հայոց։
1 » Գովասանութիւն, 'ի Նազարէթէ։
1 » Գանձ Եօթն խորհրդոց եկեղեցւոյ։
2 » Գիրք վեցօրէից։
1 » Գրիգոր Նիւսացի։
1 » Գիրք սահմանաց Դաւթի փիլիսոփայի Հայոց, մագաղաթ։
1 » Գրիգոր Տաթեւացի, Հարցմանց։
1 » Գրիգոր Տաթեւացի, Ձմրան հատոր։
1 » Ժամագիրք։
1 » Ժամակարգութիւն։

1 » Խոստովանութեանց գիրք ։
2 » Խրատք սուրբ հարց ,
1 » Խրատ և վարք նախնի իմաստասիրաց ։
1 » Կանոնք և գործք Եփեսոսի և Քաղկեդոնի ժողովոց · մեծադիր և ընդարձակ ։
3 » Կտակ չարչարանաց Յիսուսի Քրիստոսի ։
1 » Կանոնգիրք հայրապետաց ։
3 » Կիւրակէից ։
1 » Համաբնաբանութիւն ։
1 » Հարցմունք և պատասխանիք ժողովոյն Լոնտրայի ։
1 » Հաւաքումն մեկնութեան Եզեկիէլի (մար-

		գարէի գրոց)։
2	»	Հարցմանց գիրք Տաթեւացւոյ։
1	»	Հարանց վարք։
1	»	Համառօտ հաւաքումն զօրութեանց հոգւոյն։
1	»	Հայելի ազդեցութեան։
1	»	Ճառընտիր մեծ։
1	»	Ճառք Ոսկեբերանի։
1	»	Մասն Աստուածաշնչի։
7	»	Մաշտոց, մեծ և փոքր։
1	»	Մեկնութիւն Երգոց երգոյն, Վարդանայ։
1	»	Մեկնութիւն Երգոց երգոյն, Նարեկացւոյ։
2	»	Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի։
2	»	Մեկնութիւն Սաղմոսաց, Լամբրոնացւոյն։
1	»	Մեկնութիւն Սաղմոսաց

եւս՝ Լամբրոնացւոյն , մեծագիր ։

1 » Մեկնութիւն չորս գըլխաւոր մարգարէից ։

1 » Մեկնութիւն Գրիգորի Տաթեւացւոյ ։

1 » Մեկնութիւն Սաղմոսացն Դաւթի ։

1 » Մեկնութիւն Եսայեայ մարգարէի ։

1 » Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի , յիգնատիոսէ ։

1 » Մեկնութիւն Եսայեայ մարգարէի · ժողովեալ մասն առ մասն ։

1 » Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի ։

1 » Մեկնութիւն յայտնութեան Յովհաննու ։

1 » Մեկնութիւն բանից Յօնանու մարգարէի ։
1 » Մեկնութիւն ժամերգութեան, Խոսրով Անձեւացի ։
1 » Մեկնութիւն Եզեկիէլի ։
1 » » Դանիէլի ։
1 » » Սիրաքայ ։
1 » » Սաղմոսաց, Վարդանայ ։
1 » Մեկնութիւն գործոց Առաքելոց ։
1 » Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ ։
2 » Մեկնութիւն ԺԲ. մարգարէից ։
1 » Մեկնութիւն ողբոցն Երեմիայի ։
2 » Մեկնութիւն Աստուածաշնչի ։

1	»	Միքայէլ Ասորի ։
1	»	Շարական, խազերով․ մագաղաթ ։
1	»	Ողբք Եդեսիոյ ։
1	»	Ոտանաւորք, և վարք կուսանաց ։
3	»	Պատմութիւն Յօհաննու կաթողիկոսի ։
1	»	Պօղոս Տարօնեցի ։
1	»	Պատմութիւն Սիւնեաց և վրաց ։
1	»	Պատմութիւն Ս․ Գրոց համառօտ, հարցմամբ ։
1	»	Ռամ՝ արուեստագիրք ։
1	»	Սիրաք․ և այլ խրատք․
1	»	Սարգիս Շնորհալի, մեկն․ Կաթուղիկեայ թղթոց, խիստ մեծադիր ։
1	»	վիճաբանութեան գիրք,

Դաւթի և Մովսէսի Խորենացւոյ ընդ Քաղկեդոնս ։

1 » վեցհազարեայ ։

1 » Տաղերգութիւն ։

1 » Փիլիսոփայութեան գիրք ։

1 » Քարոզգիրք Առաքել Վ.ի Սիւնեաց ։

1 » Քարոզգիրք Գէորգ Պատրիարքի ։

2 » Քարոզգիրք Տաթեւացւոյ ։

3 » Քարոզգիրք Սիմէօնի կաթողիկոսի ։

1 » Քարոզգիրք, անծանօթ, հանդերձ աշխարհագրական ծանօթութեամբ ։

1 » Քարոզգիրք Պետրոս Վ.ին ։

1 » Քարոզգիրք Փռանգ վ.ին:

1 » Քարոզգիրք և մեկնութեան գիրք, Գրիգորի Տաթեւացւոյ:

1 » Քարոզգիրք Յակոբ Պատրիարքի:

1 » Քարոզգիրք, անձանօթ, հանդերձ մեկնութեամբ պատարագի:

1 » Քարոզգիրք, անձանօթ:

1 » Քարոզգիրք 'ի սրբոյ վարդապետաց բանից հաւաքեալ:

ՔԷՇԷ ՊՕԼԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Յառաջագոյն քան զառնելն Օսմանեան հզօր կայսերութեանն զաւառացն մեծին Հայաստանի արեւելեան եւ հարաւային կողմանց, էին ինքնագլուխ պետք եւ բռնակալք բազումք յազգէն Մարաց՝ Ամիր կամ Աղա անուանակոչեալ 'ի կողմանս կողմանս երկրին· բազմագոյն եւս էին 'ի հարաւ կոյս միջնաշխարհին 'ի մասին Տարուբերանի եւ Աղձնեայ։ Եւ շատ քան զԱմիրայս և Ադայս՝ էին չեխք․ և նոցա՝ իբրեւ դենպետաց՝ հզօրագոյն եւս էր ազդեցութիւն 'ի վերայ բնակչաց․ որք միաբան կամ առանձինն տիրէին դաւառաց գաւառաց, գիւղօրէից, աւանաց և շինից, միանգամայն և որոց բնակէինն 'ի նոսին ։

Հարստութիւն երկրին և տիրապետութիւն բաժին էր նոցա․ որք ոչ գիտէին զոք թագաւոր կամ աւագ քան զինքեանս․ կամք և հաճոյք նոցին ունէին զտեղի օրինաց վարչութեան ։ Եւ քանզի բնակեալքն ընդ բռնակալութեամբ սոցա էին մեծաւ մասամբ քրիստոնեայ Հայք, որք զամենայն լլկանս և զրկանս յօժարութեամբ յանձն առնուին՝ միայն զի պահպանեսցեն զեկեղեցին և զխաչ, զհաւատ և զանուն իւրեանց քրիստոնեայ. վասն այսորիկ և որք տիրէին նոցա՝ հանապազօր տուրս, տոյժըս, ընծայս և սպահանջս առնուին. յաստուածուստ իմն սահմանեալ ինքեանց իրաւունս՝ առնել զայս ամենայն. և եթէ ուրեք մինէր որ մեծատուն 'ի հունձս և 'ի հօտս, մերկացուցեալ հանէին մերկ 'ի ստացուածոց. և բազում այն էր զի յարեւէ հատանէին, 'ի հող երկրին հեղեալ զարիւն, ջնջէին զյետին հետն անգամ 'ի տանէն և 'ի տոհմէն. մեղս համարելով տեսանել ըզքրիստոնեայ՝ յազգ, զգեցեալ, ունեւոր, և զոյգն ինչ համբաւ առեալ 'ի գեղջն կամ 'ի գաւառին. փորձին խորամանկութեանց պէտք էին ուրուք առ 'ի զմիտս և զկամս հաճել պետականացն, զի ապրեսցի յեկեալ հասեալ հանապազօրդ վտանգէն կենաց. և եթէ դէպ լինէր յաջողել ումեք, տալով տայր տիրողին ոչ միայն զոր ինչ նայն կամէր, այլ զամենայն զոր ինչ ինքն ունէր. և միանդամայն կամակատար և անձնանուէր պարտէր գոլ 'ի ճահս և յանճահս, և տարող ամենայն հրամանաց և նախատանաց յաղագս ընդդէմ պատուոյ անձին և քրիստոնէական կրօնին:

Սակաւ էր 'ի տիրողաց որ յուշ ածէր զմեծամեծ ծառայութիւնըս, զհաւատարմութիւնս, մինչև 'ի դէպ եկեալ երբեմն զանձինս փակ եդելոցն 'ի վերայ նոցա, փրկանաւորելոց զտէրն իւրեանց 'ի սրոյ, 'ի հրոյ և յայլ այսօրինակ կենսական վտանգէ, զհպատակելոցն իւրեանց առեալ յիշել և խնայել 'ի հարստահարութենէ և 'ի չարեաց պատուհասից զանձն և զտուն իւրոյ ռայային :

Մեծ եւս քան զպետսն արբանեակք և գործակալք և սոսկական ծառայք նոցին հասուցանէին չարիս, և կոփէին կեղեքէին զեղկելիսն, 'ի յայտնի և 'ի գաղտնիս ։

Քանզի սոքա զոլով զօրականք բռնակալաց, համարէին զանձինըս ազատս յաշխատութեանց · և բաժինք և հասք թոշակաց նոցա՝ տուեալ լինէր ըստ արժանեացն և ըստ հաճոյից մեծամեծաց նոցին երդս տասն, քսան, երեսուն, քառասուն, և եւս առաւել կամ նուազ, որք պարտաւոր էին հատուցանել զամենայն պէտս նոցին և ընտանեաց նոցին ուտելիս, կաթնեղէն, ձիթեղէն, և զոր ինչ և զորչափ և կամէին: Ըստ այսմ բաժանեալ էին ամենայն տունք և գիւղք հպատակաց 'ի զօրականս զօրականս, 'ի զօրապետս զօրապետըս, և 'ի պետս պետս յամիրայից, յաղայից և 'ի չեխից՝ բընակելոց:

Տեարք և աւագք բաժնիցս անուանէին խաֆէր. որոց հետք երեւին և միան իսկ ցայսօր 'ի բնակիչս Սասնոյ և Խոյթայ՝ որ 'ի Մուշ. և Խիզանու, Մոկաց և Շատախու և 'ի գիւղորայսն Վանայ, որք զխաֆիրութեան տուրս տան տերանց՝ 'ի Քրդաց: Գիտեմ և զվանորայս Ս. Աղբրիկ, Մատին Առաքեալ որ 'ի Մուշ, գուցէ իցեն և այլք, որք ցայսօր ժամանակի խաֆիրաց տուրս տան, և Օսմանեան կառավարութեան տասանորդս։

Ի չինել, 'ի քակել, 'ի բրել, 'ի մշակել, 'ի հնձել, 'ի պատրաստել, 'ի կերակրել, և յայլ ամենայն պէտս ծառայութեանց ծառայել ծառայէին վիճակեալքըն խաֆիրաց և մեծամեծացն նոցին։ Տիրողացն էին արտք, անդաստանք, այգիք, մարգագետինք, և ամենայն երկիր։ Այսպիսեաց հետք և մնացորդք են բէգք Զարսանջախին, Քեղուայ, Սասնոյ, Խիզանու, Մոկաց և Շատախու գաւառաց, որք ցաւուրս ցայսօրիկ տիրացեալ ունին սեպհականեալ յինքեանց զհողային կալուածս, որք այնքան կնճիռն յարուցին և յարուցանեն ընդդէմ արդար օրինաց Օսմանեան կառավարութեան՝ չտալով թոյլ [illegible] առնել քրիստոնէից այնոցիկ գաւառաց բնակողացն ։

Իսկ թէ զի՞նչ ինչ չարիս հասուցեալ իցեն դիրք և կիրք սոյն բունակալաց և հետեւողաց սոցին յաւուրս անցելոցն՝ 'ի գլուխս քրիստոնէից կամ ոչ—մահմէտականացն համօրէն, թողում իմանալ վերծանողացն. շատ է զնոցին զարդի վարս և արարս դիտողացն չափել ընդ հնոյն. որք քաջ ամենայնի հակառակ աստուածային և մարդկային օրինաց և անձին խղճմտանաց, քամեն և տրորեն ընդ ոտիւք զիրաւունս և զարեւ քրիստոնեայ ժողովըրդեան՝ 'ի շուք նոցին ծուարելոց. այն ինչ օրէնք Օսմանեան կառավարութեան զխտիր դաւանութեան անտես արարեալ ազգաց և անձանց, ուրոյն ուրոյն իրաւանց պաշտպանութիւն և խնամակալութիւնս 'ի գործ արկանէ:

Հերիք չէին այսքան դառնութիւնք ժողովրդեան, այլ և դէպ լինէր զի հակառակէին այս Ամիրայն ընդ այլում Ամիրայի, այս Տիրող ընդ միւսում Տիրողի, և յարուցեալ 'ի միմեանց վերայ, աւարէին զհետ իւրաքանչիւր զիւրաքանչիւր ռայաս. և արտաքուստ եկեալ այլ ոք բռնաւոր յաղթահարել զմիոյ գաւառի բռնաւորն, ասպատակչին, դերեվարս առնուին, և 'ի պատանդ կամ 'ի փոխարէն հաշտութեան մատուցանէին միմեանց զայս քան քրիստոնեայ երդս, կամ երիտասարդս, և աղջկունս, մինչև տալ և հողս և օժիտս իրերաց զմարդիկ իբրև զոչխար, զէշն, զեզն, կամ զդրամ և զայլ ինչ ստացուած:

Ո՞ ոք կարէր տոկալ և կեալ այսքանեաց աղէտից և զրկանաց. երկիր՝ ուստի բարձեալ էին խաղաղ գութ և խնամք. երկիր՝ յոր բնակեալքն ոչ ճանաչէին երբէք զնշանակութիւն բառին իրաւանց. ոչ սեպհականութեանց ապահովութիւն, ոչ անդորր շնչելոյ, ոչ ժամ ննջելոյ, և ոչ որ ինչ նշանակէր նացա գոլ մարդ կենդանի ։

Բազումք՝ թողեալ զորս կարծէինն իւրեանց, փախստեայ ընդ դաշտս ցրուէին յո՛ և հասանէին․ շատ եւս այն էր զի թողեալ զկանանին և զմանկտին միանգամայն ընդ առ և ապուր իւրեանց 'ի ձեռս բռնաւորացն, ինքեանք խուսէին աստ և անդ գաղտական անձնապուրծ․ և մնացելոցն բազմաց զգլուխս կորուսեալ և բազմաց զհոգիս, այսօրինակ ամայացեալ եղեն վայրք բազմահայք․ և քանզի արհեստագործք և երկրագործք ամենայն 'ի Հայոց էին, անկան մինչև ցայսօր ընդ անկումն Հայոց և գործք ձեռաց մարդկան յայն ամենայն գաւառս ։

Իսկ ոմանք իբրև ճիւս ողկուզայ , կամ սէգ ընդ հողով ծածկեալ թաղուցեալ ապրեալ կայցէն ուր և կէին . և սերունդք նոցա մարտիրոսաբար տանելով ամենայնի 'ի վերայ եկելոցն , շարունակեն մինչև ցայսօր զհայութիւն և զքրիստոնէական կրօնըն , զօրացեալ և աճեցեալ օր ըստ օրէ ընդ խնամովք Օսմանեան կառավարութեան :

Ընդարձակագոյն , բայց և կարի կարևորագոյն լինէր տալ աստանօր ծանօթութիւն զտեղեաց և զբնակչաց այնց կողմանց զորոց է մեր բան . սակայն քանզի պակասին ինձ լիակատար տեղեկութիւնք զայնցանէ , լաւել համարիմ : Կամիմ սակայն դոյզն ինչ գրել յաղագս Եգիպտի անուանեալ ցեղին , որոց բարբառ մարական է , և խօսին զքրդերէն· այլ կրօնն և սովորութիւն հեռի յոյժ է 'ի նոցունց , և առանձին իմն ունին ինքեանց զոր ունինն · պաշտեն զպաշտօն ինչ , աղօթեն դարձուցեալ զդէմս հանդէպ արեւուն՝ 'ի ծագման , այլ ոչ ունին տեղի աղօթից յատկացեալ վայր , և ոչ հարկ և ոչ պարտք է նոցա աղօթելոյ վասն · չունին կրօնական պաշտօնեայ , ոչ գիր , ոչ թլփատութիւն , ոչ մկրտութիւն , և ոչ ինչ արարողութիւն · միայն 'ի ժամ թաղման մեռելոց դնեն դաշոյն և օճառ ընդ մեռեալն 'ի գերեզմանի , և մի ոք յերիցագունից երթայ խօսել զունկանէ մեռելոյն , և ձեռս տարածեալ միաբան աղօթեն 'ի սրտէ անձայն ղոր ինչ և աղօթենն ։ Զայրանան 'ի լսել զհայհոյել և զանիծանելն ումեք զսատանայ ։ Ըմպեն գինի ։ Առաւել համակիր թուին Հայոց քան Քրդաց և Տաճկաց ։ Քաջ և վարժ են 'ի ձի, 'ի զէն, 'ի կռիւ ։ Պայծառս զգենուն ։ Ազգս այս սփռեալ կայ 'ի յԱյրարատ, 'ի Վասպուրական, 'ի Տարուբերան և յԱղձնիս ։ Զայսքան վասն այն յիշատակեցի, քանզի 'ի յետագայ պատմութեանս տեսանին գործք և անձինք նշանաւորք յանուն Եզիտից ։

Չունէի պատեհութիւն շրջել, մանրամասն հարցանել և 'ի դիր արձանացուցանել որպէս յաղագս Եզիտից, նոյնպէս և յաղագս Ասորւոց որք բնակին ցիր և ցան 'ի Լերինս, 'ի Ձորս, և 'ի դաշտս 'ի նոյն նահանգս, որք 'ի տեղիս տեղիս խառն են ընդ Հայս, և բազում ուրեք առանձին գիւղորայս և բնակութեան վայրս կալեալ ապրին · զմի և զնոյն հանդիպումն հանդիպեալ նոցա որպէս և բնակչացն Հայոց :

Եթէ իցէ մարդոյ շրջել 'ի քունջս և յանկիւնս Հայաստան աշխարհի, ոչ միայն երեսք և կտորք հին յիշատակարանաց և պատառք մագաղաթեայ պատմագրութեանց գան 'ի յայտնումն, այլ մատուցեալ առ ծերունին, զոր տեսանէ յեցեալ 'ի սնարս քարին կամ դարին, թիկնեալ կաղնւոյն հինաւուրց, կամ բոդացեալ ուռենւոյն և դօսացեալ եղեւնւոյն, յորոյ յանոտից անցանէ վտակն մշտահոս, և ալեւորն գալեաց մօրուացն կալեալ՝ յալիս առուին յառեալ նայի, յուշ և 'ի կշիռ ածեալ զանցեալ և զեկեալ աւուրս, և մերթ ընդ մերթ մրմնջէ. «փո՜ւչ աշխարհ, բօ՜չ դունեա, սո՛ւտ աստըւոր։ Շուքըր եմ քենէ Աստուա՛ծ, փառք քեզ Ա՛ստուած . . .»։

Մատիր, համբուրեաց, ողջունեա, նիստ առընթեր, հարց, և պատմեսցէ քեզ զոր ինքն լըւեալ և տեսեալն իցէ։

Այսպիսւոյ իմն պատահեալ Տրապիզոնցի Պողոս պատուելին Թովմայեանց, բանասէր և հայրենասէր բարեկամն իմ, 'ի 1852 ամին փրկչական, 'ի վանս Ս. Առաքելոց որ 'ի Մուշ, ծերունի

Միլտոնի վարդապետին, որ 'ի ցեղէն և 'ի դեղջէն Քաջարանց Սասնոյ․ յորմէ լուեալ զպատմութիւն Տէր Պօղոսին, կամ ըստ ասորական և մարական կոչման Քէշէ Պօլէին, գրեալ ունէր, բազմիցս ևս յայլոց ժամանակակից ծերոց տուեալ պատմել զնոյն ։

Խնդրեցի, և ետ ինձ օրինակ գրածին․ այլ քանզի աշխարհաբառ և իբրև ստուերագիր էր գրեալն, սակայն ինչ աշխատութիւն յանձն առի յոճ պարզ գրաբառ հարկանել, դասաւորել, և յայսմ մատենիկս կցորդել 'ի տիպ, շնորհակալութիւն յոյժ ձօնելով բարեկամին յիշելոյ ։

Պատմածս այս՝ մասն կամ մանրանկար իմն է աւուրցն և անցելոցն 'ի վեր անդր նկարագրելոցն ճոխութեանց ։ Ո՛ն բանից և սովորութիւնք պատմագրեալք 'ի սմա, են նոյնպէս պատմողին . միայն զհանդերձ գրաբառ արկաք 'ի վերայ, քանզի յոռի և ճապաղ էր նոյխասախայն ։

ՔԷՃԷ ՊՕԼԷ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐՑԻ

Իբր առ 1820 ամին Թուականի փրկչին մերոյ, նստէր մերձ 'ի Բաղէշ՝ յաւանին Ոսիլ Դրան՝ Մար ոմն Ցավրիշ—Նաբի անուն . որոյ համբաւ և ազդեցութիւն մեծանշանակ հարկանէր շուրջ զամենայն գաւառօքն Հայաստանի և Քիւրդիստանի. և Ոսկ Գրան էր իբրեւ կեդրոն տեղի Մարական, կամ ուղիղ եւս ասել, կորդուական բանակալութեանց: Այն Նաբի իբրեւ դենպետ և իբրեւ պետաց պետ իշխէր 'ի վերայ մտաց և բազկաց միանգամայն ամենայն մեծամեծաց և բանակալացն այնոցիկ որք շուրջ զիւրեւն էին. խորհուրդ և հրաման հանէր առ նոսա. և զոր ինչ քակէր քակէր, զոր ինչ շինէր շինէր:

Քօղ արկեալ զգլխոյն՝ այնպէս ելանէր շրջել 'ի գիւղորայս յաւանս, և 'ի շէնս, անտեսանելի պահելով զերեսս իւր յաչաց քրիստոնէից անհաւատից, և 'ի մեղաւորաց մահմէտականաց՝

անարժան անձանց : Ո՛ւր և հասանէին ոտք գնացից նորին , ամբոխ յոյժ խռնեալ կուտեալ զկնի ընթանային տեսանել զհետըս նորին , մերձենալ համբուրել երկիւղիւ մեծաւ զձեռս , զոտս և զգրօշակս հանդերձից նորին , կամ լիզուլ զփոշին գարշապարաց , և ըմպել և լուանալ 'ի ջրոցն լուանալեացն նորին : Քարոզէր սա զհալածանս ընդդէմ ոչ—մահմէտականաց . և յայս լնոյր զլուխ բանից և ուսման նորա , թէ կա՛մ պարտ է զամենայն մարդիկ 'ի մեր կրօնս դարձի բերել , կա՛մ զամենեսեան 'ի ներքոյ արեգական կորուսանել :

Եւ քանզի իբրեւ զպատգամ ունէին զբան նորա ամենեքեան որ լսէին նմա, ձեռնկալու եղեն նորա համօրէն բռնակալք մերձակայք. և խորհուրդ 'ի գործ արկին զհաւատոց հրոսակի արշաւանս և ասպատակս կազմել արձակել 'ի վերայ ոչ—մահմէտականաց. և գունդս այս հրոսակաց լինէին առաւել բազմաթիւ և արիագոյն աշակերտեալք Նադիրին. և 'ի դասուց զօրականաց բռնաւորաց հազարաւորաց, ամենեքեան 'ի սուր, 'ի զէն, և 'ի հաւատս բոցավառեալ, ընդ հեծեալս և հետևակս արք իբրև երեսուն և վեց հազարք հանդերձ անուանի զօրօք Ամիրային բօհտանու՝ Միր Մէհէմմէտ մեծ իշխանին, որ աւագագոյնն էր քան զամենայն բռնակալսն:

Յայնմ ժամանակի նստէր 'ի

Սղերդ և 'ի Ռընդունեան իշխան ումն Եզիդի՝ Միրզըք անուն, անկախ յիշխանաց Մարացն և 'ի շեխիցն, որ մարդասիրաբար խնամէր յանձանձէր զամենայն Հայս, զԱսորիս և զԵզիդիս որք ընդ իւրեւն էին. Միրզըք այր էր և 'ի կամս բարի. վասն այսորիկ բազումք փախուցեալ յանտանելի լծոց այլոց բռնակալաց, գային յապաստան յերկիրն Միրզըքու, յանդորրու կային և ազատ զիւրաքանչիւր կրօնս պաշտէին. որովք բազմացեալ և ամրացեալ լինէր բնակութիւն գաւառացն, 'ի սփոփանս պատըսպարելոցն և 'ի փուշ շրջակայիցն տիրողաց։

Խորհուրդ 'ի մէջ առեալ Նարէին և իւրքն, հրաման հանէին զառաջինն յարձակիլ 'ի Սղերդ քաղաք և 'ի Բըհտուան աւանն, կոտորել նախ պանդըր եղեալսն, բեկանել նուաճել զՄիրզըքին զօրութիւն, զի այնուհետեւ դիւրին լիցի տիրել այլոց ամենեցուն. ահ արկեալ և եթ նոցա, ասէ, անձնատուր դան կա՛մ 'ի հաւատս մեր կա՛մ 'ի մահ տանջանց։

Իբրեւ զգետս զայրացեալս յաւուրս գարնայնոյ, այնպէս հորդան տուեալ մոլական բանակին՝ յառաջէին աւարառութեամբ, հրձգութեամբ և սպանութեամբ. զոր տեսեալ Միրզըք և մեծամեծք Հայոց և Եզիդացն՝ ժողովեցան միաբանեցին հնարս հայթայթել զդէմ առնուլ ոհադին և անխուսամեծի վտանգին կորստական։

Եւ իբրեւ զարհուրեալք, ափշեալք, տարակուսեալք լինէին և զինչ առնելն զանգիտանային, աչք ամենեցուն դարձան հայել յաւագ երից քահանայն Հայոց 'ի Տէր Պօղոս, որ 'ի բանս, յինչս և յարութիւնս նշանաւոր էր 'ի դաւառին, և խորհրդական, օգնական և սիրելի յոյժ յաչս Միրզըբին· զսա անուանէին քրդախօս Հայք և Եգիպտիք՝ Քէշէ Պօլէ։ Սա յառաջ մատուցեալ անցեալ կացեալ 'ի սարսափառու ամենին, բանայր և ցուցանէր նոցա, ասելով, թէ Ձէ այս կռիւ սովորական վասն մարմնաւոր փառաց և իշխանութեան կամ մրիժու, այլ ընդ ազատութեան անձանց զան և զհաւատո մեր բառնալ հանել 'ի մէնջ· և քանզի եթէ խոյս տամք՝ սատակիմք, եթէ զգլխի հարկանիմք՝ մեռանիմք, բայց և մեռուցանեմք, և զանուն քաջութեան անձանց ժառանգեմք· հապա անյապաղ, արիք ընդդէմ, 'ի ճակատ, և կանայք և մանկտին մեր քաջալերս կարդասցեն մեզ, և 'ի մէնջ ուսցին զօրինակ քաջութեան ապրելոյ յաղթելոյ, կամ կռուելոյ և մեռանելոյ:

Ահա ես ընդ առաջ ձեր ամենեցուն:

Շարժեալ և ոգի առեալ 'ի բանիցն տէր Պօղոսին՝ Միրզըք և ամենայն մեծամեծք ատենին, մանաւանդ վստահ յայրն բաղմայաղթ, որոյ կորովութեան զփորձ բազմիցս առեալ էին կանծաւ · ոստեաւ այր իւրաքանչիւր 'ի տեղւոջէն սթափեալ յերկիւղէն, զէն բարձեալ կազմեցան կացին :

Զայն ետ տէր Պօղոսն Հայոց՝ և Միրզըք Եգիպտաց, գումարեցան վաղվաղակի ոգիք իբրու տասն հազար · քանզի ետ կարդալ Միրզըք 'ի պահս և յաղօթս կալ, զԱստուած 'ի թիկունս կոչել, և բազմաց կարօտելոց հրամայէր ողորմութիւնս բաշխել յընչից իւրոց և ստացուածոց · զնոյն օրինակ առնէին որք ունեւորքն էին : Նաև 'ի վերայ Աստուածային յուսոյն՝ դիմէր և 'ի հմայս և գուշակողս, որք նշան յաջողութեան ցուցանէին նմա : Խրախոյս տուեալ այնուհետեւ սակաւաձեռն իւրոյ բանակին՝ յառաջ խաղայր առ Սղերդ քաղաքաւն, բաժանեալ զզօրսն յերկուս, 'ի Հայս և յԵզիդիս · զօրագլուխ Հայոց կարգէր Տէր Պօղոս, և Եզիդաց ինքն Միրզըք ։ Հայք առ հասարակ հետևակք էին, հրացանակիրք, սուսերակիրք և ասպարաւորք · իսկ Եզիդիք մեծաւ մասամբ հեծեալք և տիգաւորք ։

Անդ առ տեղեաւն 'ի պատահել ճակատուց յերկոցունց կողմանց հակառակորդաց, դարձան Միրզըք և Տէր Պօղոսն առ իւրաքանչիւր զունդս իւրեանց և ասեն . — կազմ կացէք, և զհետ մեր դիմեցէք · ահա մեք երկաքանչիւրքս արշաւեմք 'ի մէջ մարտին թշնամեաց · եթէ ետ մեզ Աստուած յաջողութիւն ;

դառնամք ողջ յետս առ ձեզ՝ ածեալ նշան յաղթութեան 'ի քաջալերութիւն. իսկ եթէ անկանիմք մեռեալ, յայնժամ դուք ամենեքեան միահամուռ յարձակեալ ցուցէք զտիրասիրութիւն ձեր, զազատասիրութիւն, յանձն առեալ զմահ արիաբար. այլ 'ի մահուն ձեր միոյ միոյ ուրուք 'ի ձէնջ փոխանակ՝ հազարս 'ի նոցանէ արկէք տապաստ, և այնպէս կնքեցէք զձեր վախճան և զմեր վրէժ: Եւ զայս ասացեալ ողջունէին զզօրն, և նոքա 'ի լալիւն և յարտօսր հատեալ թողուին նոցա գնալ:

Յայնմ վայրի փաղփաղակի ընթացան խոյացան իբրեւ զառիւծ 'ի յորս և իբրեւ զարծուի արագաթռիչ, Միրզըքն և Տէր

Պօղոսն, յարձակեցան, հասին, և անկան 'ի մէջ Մարաց զօրուն զօրէն կրակի խանձողելոյ յեղեգունս, և իբրև զամպրոպ փոթորկեալ ընդ աջ և ընդ ահեակ հարկանէին, լափէին, թաւալէին, նիզակաքաղս արարեալ զստուարութիւն բանակին, և զընտիր ընտիրս սատակէին. և զերկուց ականաւորաց քաջաց զգլուխս կտրեալ ցից 'ի նիզակ առեալ ածէին 'ի բանակն իւրեանց. անդէն աղաղակ ցնծութեան հնչէր 'ի զօրուն, և այր իւրաքանչիւր վառէր վաղէր մ յուսով յաղթութեան՝ հարկանել զթշնամին, որ եռացեալ ատելութեամբ և բորբոքեալ վրէժխնդրութեամբ յարձակէր գայր 'ի վերայ ։

ի խուռնել յերկոցունց կողմանց և յարձակմանէ այնքանեաց հրազինուց մթանայր լոյս արեւուն, և 'ի սաստիկ բաղխմանէ սրոց և տիգաց անգթաբար զօրէն մայրեւորաց զմիմեանս կոտորելոց, ձայնք ահեղ հնչէին իբրեւ զձայն գոչելոյ որոտման ամպոց և կոհակաց ջուրց ծովուն մրրկելոյ ։

Ժամք ձիգ անցանէին, այլ ոչ յաղթութեան և ոչ պարտութեան երեւէր կողմն ․ քանզի քաջութիւն միոյ կողման, և թանձրութիւն միւսոյն զուգակշիռ պահէին զվիճակ ։

Ցայսմ տագնապալիր վայրկենին, զօրապետ զօրուն բօհտանու Միր Մէհէմմէտ ամիրային, այր հուժկու, և յաջողաձեռն, 'ի նժոյգ ընտիր աշտանակեալ, սպառազէն և նիզակաւոր, որ զգեցեալն էր զրահ երկաթի յանձն իւր, յառաջ խաղայր, վարէր, սատակէր զբազում յետուստ 'ի գնդէն Հայոց, և հասանէր մօտ ուր Միրզըքն էր. և ինքն զերծ մնայր 'ի հարուածոցն տեղացելոց, ամրափակեալ գոլով զրահիւք:

Դարձաւ Տէր Պօղոս և ետես զՄարն այնքան յաջողեալ և յառաջեալ, վաղ տայր անդէն հասանէր առ նա, և յետուստ կուսէ 'ի սեաւ քուռակէն յոր հեծեալն էր, ոստնոյր արագ ակիրթ 'ի գաւակ ձիոյն զօրապետին Մարաց, և միով բազկաւ գրկամիակեալ պրկեալ զձեռսն զերկոսին 'ի կուրծս նորին, միւսով ձեռամբն հանէր դաշոյն 'ի գօտւոյն և կոխեալ 'ի ծոծրակ առն, հեղոյր զարիւնն . փողոտէր ետ ընդ ետ և 'ի վայր հոսէր յերիվարէն, և ինքն ածեալ զնիզակ սպանելոյն, աշտանակեալ 'ի բարձրավիզ ձերմակ նժոյգն նորին, իբրեւ զկայծակն արագահաս ժամանէր օգնել Միրզըքին, որ անդէն խռով քաջութեամբ մերձենայր հասանէր յաղթանակել . էզարկ Տէր Պօղոսն զմնացեալսն . և որք անկանն՝ անկան, և որք փախեանն՝ փախեան յերեսս երկրի ցիր և ցան ։

Ի փախստէից մասն ինչ, յորս բազումք էին հետեւակք հրացանակիրք, անկեալք 'ի գոմս Սղերդցւոց լինէին ապաստան . զհետ մտեալ նոցա զօրացն Միրզըքու և Տէր Պօղոսին և պաշարեալ՝ կամէին ձերբակալել, իսկ նոքա յանդգնութեամբ դէմ եղեալ կռուէին ընդ նոսա. և իբրև ոչ եղեն անձնատուր, հրամայեաց Միրզըք հրով այրել զգումըն, յորս ապաստանեալքն կենդանւոյն այրեցան, և ճենճերք նոցին հալեալ իբրև ջուր ընդ առուս հոսէին 'ի մերձակայ գետն, զոր անդ կացեալքն տեսանէին:

Յաղթականքն առին զամենայն աւար բանակին թշնամեաց, և դարձան 'ի տեղիս իւրեանց խնդութեամբ. իսկ Մարք ապրեալքըն ոչ ևս իշխեցին յիշել զխորհուրդս իւրեանց զնախկին և ոչ զվրէժ լուծանելոյ այսմ ահագին պարտութեան: Մեծացաւ իշխանութիւն Միրզըքին. մեծարեցաւ անուն Տէր Պօղոսին · և համբաւ կենաց նորին զարհուրեցուցանէր զՄաշու՝ մինչեւ ցօր մահուան նորա :

Յաղագս պատմողին :

Պատմող բանիս Սիմէօն վարդապետս այս ծնեալ 'ի Քաջարանց գիւղն Սասնոյ 'ի մեծատուն և քաջանուն ծնողաց , և էր ինքն անձնեայ , թիկնաւէտ , հսկայակերպ , հաստոսկր , և կարի զօրեղ և սրտեայ : Սա նախ ամուսնացեալ ծնանի դուստր մի , և 'ի մեռանել կողակցին և յամուսնացուցանելն զիւր դուստրն , քանզի էր գրոց աշակերտ , ձեռնադրի շուշտակ վարդապետ , կրօնաւորի 'ի վանորայս Աղձնեաց և Տարօնոյ երկրին · և յաւուրս Ադրիանուպօլցի բարեյիշատակ Պօղոս Պատրիարքին գնայ և մնայ 'ի սուրբ

Երուսաղէմ զամս քանիս : Այլ 'ի բնակչանալն իւրում 'ի Ս. Աղբերիկ վանսն՝ որ առ Սասուն, յորում էր վանահայր քաջահամբաւն Գաբրիէլ վարդապետ շուշտակն, միաբանեալ ընդ սա, և երկաքանչիւրքս այսոքիկ ընդդէմ հրոսակաց և արշաւանաց Մարաց բնակելոց շուրջ առ վանիցն՝ բազում և մեծամեծ նախճիրս գործէին յաղագս պահպանելոյ ըզ վանքն 'ի թալանելոյ, դոլով միանգամայն յաջողակ 'ի տէգ և 'ի գէն, ընդ ոտն և յերիվար. 'ի ժամանակին՝ յորում տիրողն Տարուբերանոյ Սէլիմ փաշայն ամբառնայր ընդ իւրեւ ածել զՍասուն, և Սասնեայք զդէմ ունէին նմին, չկամեցեալ յանձն առնուլ հպատակել Սէլիմին : Ասպատակք երկոցունց կողմանցս տեւէին ամս իբր հնգետասան. և Ս. Աղբերիկ վանքն գտանէր որպէս պորտ՝ կեդրոն Սասնոյ և Տարուբերանոյ ։

Սիմէօն վարդապետս այս յայլ և յայլ կռիւս եւս և 'ի վտանգս բազմիցս մտեալ և ելս գործեալ և արիագոյն հանդիսացեալ էր, որպէս էր տեսանել զմարմին նորա գրեթէ բովանդակ ծաղկեալ 'ի սպիս ։ Մեռաւ Սիմէօն վարդապետ 'ի 1855 ամին 'ի խոր ծերութեան, յիւրում բնիկ գաւառին 'ի գիւղն Բացի, յոր և թաղեցաւ մօտ 'ի գեօղն Քաջարանց․ ուր և կայ ցայսօր կենդանի՝ ծընեալն 'ի դստերէ նորին Տէր Մակար քահանայն ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Զպարունակելոցն գրքուկիս զանազանութեանց նիւթոց արժան էր տեսութիւն ինչ ընդարձակ գրել, այլ թողում զայն այլում պատեհութեան, որպէս և յաղագս Գրոց Բրոցին մերոյ․ քանզի 'ի մտի ունիմ շարունակել զայնօրինակ տեղագրական և զայսպիսի պատմական գործս հետզհետէ ածել 'ի լոյս, եթէ քաջալերեսցեն զիս նախանձախնդիրք և սիրողք ազգի և հայրենեաց մերոց, բարերարողք կամ գնողք գրոց, առ 'ի հատուցանել գոնէ զգինս տպագրութեանց ։

Յերրորդ ձեռնարկին իմ խոստանամ դնել և զբառս գաւառականս հանդերձ նշանակութեամբ նոցին, որքան 'ի մտի և 'ի ձեռին կայ ինձ ։ Յայնժամ գոհացուցանեմ և զայնոսիկ, որք մեղադրեցինն զիս յաղագս Գրոց Բրոցին, թէ ընդէ՞ր զ'ի նմա եղեալ գաւառական բառիցն չգրեցի ըզ նշանակութիւնս առընթեր, կամ դրառարան 'ի վախճանին, վասըն այսորիկ փութամ յայսմիկ և յայսմ մատենիկիս քանի ինչ բառից տալ ծանօթութիւն, որք չիցեն յայտնի ամենից։

Երես 31. Շուշպէմ. — որոյ հակադարձն է՝ Անշուշտ եմ։ Զայս բառ վանեցիք սովորաբար 'ի գործ ածեն, յորժամ զտարակուսելն և զչգիտելն կամիցին ասել. է և բառ ինչ վանեցւոց այսու նշանակութեամբ գործածելի, որ է շուշպէմ։

Երես 32. Աէօյ. բառ Մշեցի Հայոց, որ նշանակէ պապ կամ մեծ հայր։

Երես 34. Բէծոյ. բառ Արարատեան Հայոց, որ նշանակէ ծեր, ալեւոր. այսպէս յորջորջեն ոչ զայն որ իւրեանց տան և ընտանեաց է բուն հայր, այլ զայն՝ որ 'ի գեղջն կամ 'ի թաղըն գտանի. կամ այր ալեւոր անծանօթ, բայց պատկառելի և յարգելի ։

Երես 165 · Բողացեալ, որոյ արմատն է բող · գրի նաև բողոտ · բողացեալ անուանեն ըզ ծառ կամ զփայտ, որոյ մէջն կամ 'ի ճճեաց կերեալ կամ 'ի հնութենէ աւուրց փտեալ իցէ ։

Երես 196 · Ա....ր · բառ վանեցւոյ, զոր 'ի կիր արկանեն առ 'ի նշանակել երկիր կամ երկրաւոր՝ հակադարձ երկնային կամ հանդերձեալ բառին ։

Բաւ է այս և եթ առ այժմ ։ կամիմ խօսել սուղ ինչ և յաղագըս ձեռագիր մատենից նախնեաց օրինակելեաց (մանաւանդ 'ի յետին դարս), որք գտանին աստ և անդ, զորոց ասացաք թէպէտ 'ի կարգին սակաւուք · բայց դու յորժամ կամիցիս խնդրել մատեան կամ ճառ, մի՛ շատասցիս ընթեռնուլ զմակագիր կամ զճակատագիր նորին , քանզի սովոր են օրինակողքն 'ի միում յայնմ մատենի կցել խճել զոր ինչ և պատահեալ իցէ ինքեանց , կամ զոր առաւել ախորժեալն իցեն օրինակել դնել յայ․ տետրն գիրսն , յորում թուղթք իցեն յաւելեալ և միացեալ անգիր ․ հետազօտողացն միայ գրուխանդակ զինչ և իցէ ձեռագիրն քաղել լրիւ , և ահա յանկարծ հանդիպի նմա խնդրելին իւր , մերթ եւս՝ քան զխնդրելին առաւել պատուական ։

Ազգային Ուսումնական և վանորէից պատուարժան ժողովուրդք իցէ թէ զուշ և զջան իւրեանց դարձուցանէին ընդ դաստիարակութեան և նիւթական բարեկարգութեանց՝ այց առնել եւս և գրենեացն , որք գտանին 'ի վանորայս և 'ի գաւառս , ժողովել գէթ զայնոսիկ և հանել 'ի փոշւոյ և ազատել 'ի մաշելոյ · զետեղել տալ յազգային ինչ թանգարանի՝ հաստատեալ յապահով վայրի · կա՛մ գիտականն կա՛մ զօրինակսն նոցա : Նոյնպէս և գրել տալ զստորագրութիւնս վանորէիցն , եւս և իւրաքանչիւր գաւառաց ժամանակակից և անցեալ իրաց , նշանաւոր անձանց և վայրաց զպատմութիւնս , զորս 'ի տիպ արձանայուցանել եթէ չիցէ այսօր պատեհ , գան աւուրք և յաջողեն :

Զայս ձեռնարկ գիրքն ևս է 'ի ձեռն բանագէտ ուսուցչաց կամ գրագէտ վանականաց 'ի գլուխ հանել · այսու վախճան հասանէ նաև այլապէս կռուոց և յոռութեանց ոմանց վանականաց , որք ծնունդք են պարապորդութեանց · որք և ընդ բամբասանօք ժողովրդեան և դասաղոց անկեալ կան խոտիւ , և իբրեւ խոտան համարեալ յազգէ․ են և որոց խուցք և դարանք կահաւորեալ են կթխայովք և շիշովք և ըմպանակօք, ուր չերեւին ոչ գիրք ընթեռնլոյ և ոչ սեղան գրելոյ․ որոց արդարեւ ՚ի գէպ գայ ասացեալն երբեմն յաղագս էջմիածնի վեհարանին հետեւեալ բանն բանասիրի անձինն բազմարդիւն, որոյ սխրալի գործք և ըստ անուանն ծանօթ են բազմաց։

Երբ, Թքամեան՝ վթանաքամանն
Դարձեալ ետես այս վեհարան․
Զի՞նչ այլ քեզ յոյս աստէն մնալ,
Մե՛սրոպ Դաւթեան Թաղիադեան։

Qualitätseinband Fr. Lühdorf
Haltbarkeits-
Garantie
Wuppertal-E., Ausblick 93